ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Համաձայնագիր Եվրոպական Միության և Հայաստանի Հանրապետության միջև վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին

վեցերորդ մոնիտորինգ

Երևան 2019

ՀՏԴ 327(042.3)
ԳՄԴ 66.4
Մ 881

Ծրագիրը իրականացվել է Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոն հասարակական կազմակերպության կողմից:
www.acgrc.am

Զեկույցի հեղինակ՝ Արմեն Ս. Գրիգորյան
Տեքստի թարգմանիչ՝ Խաչատուր Ադումյան

Մ 881 Մոնիտորինգի հաշվետվություն/Համաձայնագիր Եվրոպական Միության և Հայաստանի Հանրապետության միջև վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին (վեցերորդ մոնիտորինգ).- Երևան: Էդիթ Պրինտ, 2020. - 72 էջ

Ուսումնասիրությունը իրականացվել է Բաց հասարակության հիմնադրամներ–Հայաստան կազմակերպության ֆինանսական աջակցությամբ:

Սույն զեկույցում տեղ գտած տեսակետները և վերլուծությունները արտահայտում են հեղինակների կարծիքը և հաստատված չեն Բաց հասարակության հիմնադրամներ–Հայաստանի կամ նրա խորհրդի կողմից: Սույն զեկույցի բովանդակությունը կարող է չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ–Հայաստանի տեսակետներին: Սույն զեկույցի պատրաստումը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ–Հայաստանի ամբողջական ֆինանսական օժանդակության շնորհիվ՝ դրամաշնորհ N20012:

ՀՏԴ 327(042.3)
ԳՄԴ 66.4

ISBN 978–9939–75–489–5

© ԳՏՀՎԿ, 2020, www.acgrc.am
© Էդիթ Պրինտ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն..... 5

Մոնիտորինգի առարկա և մեթոդաբանություն 11

Գլուխ առաջին՝ ՀՀ-ԵՄ հարաբերությունները վիզաների դյուրացման և ազատականացման շրջանակում 17

Գլուխ երկրորդ՝ ՀՀ-ԵՄ հետընդունման (ռեադմիսիայի) համաձայնագրի կիրարկման մշտադիտարկում 43

Վերջաբան 69

Ներածություն

ՀՀ–ԵՄ հարաբերությունների զարգացման դինամիկան վիզաների տրամադրումը դյուրացնելու և հետընդունման (ռեադմիսիայի) ոլորտներում

2014 թվականից սկսած արդեն վեցերորդ տարին է անընդմեջ, ինչ Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոնի (ԳՏՀՎԿ) կողմից Բաց հասարակության հիմնադրամներ–Հայաստան կազմակերպության աջակցությամբ իրականացվում է Հայաստանում Շենգենի վիզաների տրամադրումը դյուրացնելու ու դրա հետ առնչություն ունեցող մարմինների գործունեության վերաբերյալ ուսումնասիրություն: Նման մշտադիտարկման անցկացնելու և համակողմանի վերլուծություն իրականացնելու անհրաժեշտությունը կարևորվեց հատկապես ԵՄ և ՀՀ միջև վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին համաձայնագրի և առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին համաձայնագրի 2014թ. հունվարից ուժի մեջ մտնելուց հետո:

Ինչպես գիտենք, Արևելյան գործընկերության շրջանակներում համագործակցության չորս թեմատիկ պլատֆորմներից մեկը հանդիսանում է մարդկանց միջև շփումները, ինչը ՀՀ քաղաքացիների ԵՄ տարածք մուտք գործելու համար ենթադրում է մուտքի արտոնագրի ստացում:

Չնայած Հայաստանի ԵԱՏՄ անդամակցությանը ՀՀ քաղաքացիների համար ԵՄ–ի հետ վիզաների դյուրացման գործընթացը շարունակվում է: Այժմ, կարծես, բոլոր նախադրյալներն են ստեղծվել հաջորդ քայլին՝ վիզա երկխոսությանը («Visa Dialogue») անցնելու համար, իսկ վերջինիս հաջող իրականացման դեպքում՝ կարճաժամկետ այցերի համար առանց վիզայի ռեժիմի անցնելու համար: Դա անչափ կարևոր է, քանի որ համագործակցության և մարդկանց միջև շփումների, ազատ ճամփորդելու, սովորելու հիմնական խոչընդոտներից մեկը հանդիսանում է հենց վիզաների հարցը:

Ինչպես հայտնի է, 2020 թվականի մարտի 17–ին շենգենյան գոտու բոլոր երկրներն հաստատեցին Եվրոպական հանձնաժողովի առաջարկած ծրագիրը, որով նախատեսվում է փակել շենգենյան գոտու արտաքին սահմաններն առնվազն 30 օրով[1]: Ապրիլի 8–ին Եվրոպական հանձնաժողովն առաջարկեց երկարացնել շենգենյան գոտու ներսում քաղաքացիների ճանապարհորդելու սահմանափակումներն ընդհուպ մինչև մայիսի 15–ը:

Դա ամենաճայրահեղ միջոցն է, որը ԵՄ պետությունները ձեռնարկել են ԿՈՎԻԴ–19–ի հետագա տարածումը զսպելու համար: Մնում է հուսալ, որ Շենգենյան համաձայնագրի գործողության ժամանակավոր կասեցումը՝

1 https://www.aa.com.tr/en/europe/brussels–wants–to–extend–eu–travel–ban–amid–virus/1797626

պայմանավորված Եվրոպայում կորոնավիրուսի տարածման վտանգով, չի ազդի Հայաստանի քաղաքացիների համար վիզաների դյուրացման՝ ԵՄ ծրագրերի վրա: Այդ միջոցառումը թերևս ժամանակավոր բնույթ կունենա, և ԿՈՎԻԴ-19-ի համաճարակի հաղթահարումից հետո ԵՄ-ն կրկին կվերականգնի շենգենյան գոտու լիարժեք գործառույթը:

Նոր համապարփակ համաձայնագրի շուրջ ՀՀ և ԵՄ միջև բանակցությունները պաշտոնապես մեկնարկել են 2015թ. դեկտեմբերի 7-ին Բրյուսելում[2]: Մինչ 2017թ. հունվար կայացել են ՀՀ-ԵՄ միջև շրջանակային համաձայնագրի շուրջ բանակցությունների 8 փուլեր[3], իսկ այս գործընթացի տրամաբանական ավարտը եղավ 2017թ. նոյեմբերի 24-ին, երբ ՀՀ ԱԳ նախարար և ԵՄ արտաքին քաղաքականության և անվտանգության հարցերով բարձր ներկայացուցիչ ստորագրեցին ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը (ՀԸԳՀ): Համաձայնագիրը ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ է, որ այն վավերացնեն Հայաստանն ու Եվրամիության բոլոր 28 անդամ երկրները[4]:

2018թ. ապրիլի 11-ին ՀՀ Ազգային Ժողովը միաձայն քվեարկությամբ վավերացրեց ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ[5]: Քննարկումների ժամանակ հատուկ կարևորվեց համաձայնագրով նախատեսված խորհրդարանական վերահսկման մեխանիզմի՝ Խորհրդարանական գործընկերության կոմիտեի ստեղծումը, որը բաղկացած է լինելու ՀՀ ԱԺ և Եվրոպական խորհրդարանի անդամներից: Հատուկ անդրադարձ կատարվեց նաև Համաձայնագրի նորամուծություններից մեկի՝ Քաղաքացիական հասարակության հարթակի ստեղծմանը, որը կազմված կլինի ՀՀ և ԵՄ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից և կգործի թափանցիկության, ներառականության և ռոտացիայի սկզբունքների հիման վրա:

ԵՄ արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցիչ, Եվրոպական հանձնաժողովի փոխնախագահ 2018թ. հունիսին ՀՀ ԱԳՆ-ի հետ հանդիպման ընթացքում դրական է գնահատել Հայաստանի հետ վիզայի դյուրացման ու ռեադմիսիայի գործընթացը՝ նշելով, որ մուտքի արտոնագրային ռեժիմի դյուրացման և ռեադմիսիայի կիրառկումը գնահատելուց հետո կքննարկվի նաև հաջորդ

2 Հայաստանի հետ շրջանակային համաձայնագրի շուրջ բանակցությունների մեկնարկ(13.10.2015): http://eeas.europa.eu/delegations/armenia/press_corner/all_news/news/2015/2015_10_13_hy.htm

3 Արտաքին գործերի նախարար Է.Նալբանդյանի խոսքը և պատասխանները լրագրողների հարցերին 2016թ. դիվանագիտական տարվա ամփոփիչ ասուլիսին (31.01.2017): http://mfa.am/hy/press-conference/item/2017/01/31/min_dipyear_2016/

4 The Armenia-European Union Comprehensive and Enhanced Partnership Agreement has been signed (24.11.2017). http://www.mfa.am/hy/press-releases/item/2017/11/24/cepa_signing/

5 ՀՀ Ազգային Ժողովը վավերացրեց ՀՀ-ԵՄ նոր շրջանակային համաձայնագիրը (11.04.2018): https://www.mfa.am/hy/press-releases/2018/04/11/dfm-na-cepa/8126

քայլին անցնելու հարցը: Այդ տեխնիկական նախապայմանները ավելի ուշ կհանգեցնեն վիզայի ազատականացման հարցի շուրջ երկխոսության սկզբին[6]:

2018թ. հուլիսի 2-ի ՀՀ վարչապետի թիվ 906-Ն որոշմամբ ստեղծվել է Համաձայնագրի և ՀՀ և ԵՄ միջև Գործընկերության առաջնայնություններ փաստաթղթի կիրարկումն ապահովող միջոցառումները համակարգող միջգերատեսչական հանձնաժողով:

2018թ. նոյեմբերի 27-ին տեղի է ունեցել ՀԸԳՀ-ով նախատեսված ՀՀ և ԵՄ Գործընկերության կոմիտեի անդրանիկ նիստը: Գործընկերության կոմիտեի նիստի ընթացքում քննարկվել է ՀՀ կառավարության կողմից կազմված ճանապարհային քարտեզի նախագիծը: Եվրոպական կողմը գոհունակություն է հայտնել ճանապարհային քարտեզի նախագծի վերաբերյալ՝ որպես ՀԸԳՀ իրականացման համար լավ մեկնակետ: Հանդիպման ընթացքում ԵՄ վերահաստատեց իր աջակցությունը ՀՀ կառավարության բարեփոխումների գործընթացին և ընդգծեց, որ ՀԸԳՀ իրականացումը կհանդիսանա երկրում բարեփոխումների և արդիականացման հիմնական գործիք, կօգնի ԵՄ ներդրումների ներգրավմանը, կխթանի ԵՄ հետ փոխանակումները և հստակ օգուտներ կապահովի ինչպես ԵՄ, այնպես էլ ՀՀ քաղաքացիների համար: Հայաստանը և ԵՄ համաձայնվեցին շարունակել քաղաքացիների շարժունակության խթանումը Մուտքի արտոնագրերի դյուրացման և Հետընդունման մասին համաձայնագրերի միջոցով և պատեհ ժամանակին դիտարկել Մուտքի արտոնագրերի ազատականացման շուրջ երկխոսության մեկնարկը՝ պայմանով, որ լավ կառավարվող և անվտանգ շարժունակության պայմաններն առկա են: Գործընկերության կոմիտեն քննարկեց նաև իրավունքի գերակայությանը, միգրացիային, տնտեսական զարգացմանը և կրթությանը, ինչպես նաև Արևելյան գործընկերությանը և տարածաշրջանային խնդիրներին առնչվող հարցեր[7]:

Այնուհետև, 2018թ. դեկտեմբերի 19-ին Ն. Փաշինյանը մասնակցել է ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ-ի և ՀՀ-ԵՄ Գործընկերության առաջնայնություններ փաստաթղթի կիրարկումն ապահովող միջոցառումները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի հերթական նիստին, որտեղ իր ելույթում նշել է, որ ՀԸԳՀ-ի ստորագրումը կարևոր քայլ էր ՀՀ-ԵՄ հարաբերություններն առավել խորացնելու և Հայաստանում բարեփոխումների շարունակականությանն աջակցելու հարցում: Ներկայումս հանձնաժողովի հիմնական խնդիրը ճանապարհային քարտեզի մշակման գործընթացի համակարգումն է: Փաշինյանը նշել է «...թևակոխում ենք առավել ինտենսիվ և ընդարձակ

6 Հայաստանի հետ վիզայի դյուրացման ու ռեադմիսիայի գործընթացը հաջող է իրականացվում. Մոգերինի (22.06.2018): https://armenpress.am/arm/news/938543.html

7 ՀՀ-ԵՄ Գործընկերության կոմիտեի անդրանիկ նիստը (27.11.2018): https://www.mfa.am/hy/press-releases/2018/11/27/armenia-eu/8778

ծրագրերի կազմման ու իմպլեմենտացման փուլ»[8]: 2019 թվականի հունիսին Հայաստանի Հանրապետության կառավարությունն ընդունեց ճանապարհային քարտեզը, որը նոյեմբերի 12-ին ներկայացվեց Երևանում ԵՄ պատվիրակության և ՀՀ կառավարության կազմակերպած համատեղ միջոցառման ընթացքում, որի ժամանակ կողմերը ներկայացրեցրին ՀԸԳՀ ճանապարհային քարտեզի իրագործումը[9]:

Հիշեցնենք, որ ստորագրված ՀԸԳՀ 2018թ. հունիսի 1-ից մասնակի ուժի մեջ է մտել, և այս պահին գործում է Համաձայնագրի դրույթների շուրջ 80 տոկոսը: Մնացած դրույթներն ուժի մեջ կմտնեն ԵՄ երկրների խորհրդարանների կողմից Համաձայնագրի վավերացման գործընթացն ավարտելուց հետո: Ներկայումս ԵՄ 27 անդամ պետություններից միայն հինգը չեն ավարտել այդ համաձայնագրի վավերացման ընթացակարգերը՝ Իտալիան, Ավստրիան, Հունաստանը, Պորտուգալիան և Իսպանիան: Մնում է հուսալ, որ ԿՈՎԻԴ-19 համաճարակով պայմանավորված իրավիճակն անորոշ ժամկետով չի հետաձգի համաձայնագրի վավերացումը: Այնուամենայնիվ, հասկանալի է, թե ինչպիսի մարտահրավերի առաջ են կանգնած Եվրոպայի երկրները և համաշխարհային ողջ հանրությունը:

ՀԸԳՀ-ն թույլ կտա էլ ավելի խորացնել կողմերի հարաբերությունները Եվրոպական հարևանության վերանայված քաղաքականության և Արևելյան գործընկերության շրջանակներում, հնարավորություն կընձեռնի ԵՄ-ին և ՀՀ-ին իրենց հարաբերությունները որակական նոր, ավելի բարձր մակարդակի հասցնելու համար: Այս համաձայնագրում առանձին անդրադարձ է արվում նաև սույն ուսումնասիրության շրջանակներում մեզ հետաքրքրող թեմաներին, այն է՝ շարժունություն, միգրացիոն և ռեադմիսիոն գործընթացներ, անձնական տվյալների պահպանություն և այլն: Բացի այդ ուսումնասիրության առարկա հանդիսացող թեմաներին մանրամասն անդրադարձ է արվում նույն Համաձայնագրի Հոդված 13-ում (Անձնական տվյալների պաշտպանությունը), Հոդված 14-ում (Միգրացիայի, ապաստանի տրամադրման և սահմանների կառավարման հարցերի շուրջ համագործակցությունը) և Հոդված 15-ում (Անձանց տեղաշարժը և հետընդունումը)[10]:

Հատկապես կարևորում ենք այն փաստը, որ ՀԸԳՀ-ում ուղղակիորեն նշվում է, որ «Կողմերը պետք է ապահովեն ԵՄ և ՀՀ միջև Առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման մասին և Մուտքի արտոնագրերի դյուրացման մասին համաձայնագրերով ստանձնած պար-

8 Թևակոխում ենք առավել ինտենսիվ և ընդարձակ ծրագրերի կազմման ու իմպլեմենտացման փուլ. Փաշինյանը՝ ՀՀ-ԵՄ համաձայնագրի մասին (19.12.2018): https://news.am/arm/news/487062.html

9 https://www.e-gov.am/u_files/file/decrees/varch/2019/19_666_1.pdf

10 http://www.mfa.am/u_files/file/CEPA.pdf

տավորությունների լիարժեք կատարումը և **շարունակեն խթանել Մուտքի արտոնագրերի դյուրացման համաձայնագրի միջոցով քաղաքացիների շարժունությունը և համապատասխան ժամանակահատվածում քննարկեն մուտքի արտոնագրի ազատականացման շուրջ երկխոսություն սկսելու հարցը»:**

ԵՄ և ՀՀ միջև վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին և առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին համաձայնագրերի կիրարկման մոնիտորինգը(մշտադիտարկում)[11] թույլ է տալիս բացահայտել կարևոր բացթողումները, վերլուծել ու առաջարկություններ ներկայացնել դրանք վերացնելու համար, հնարավորություն է տալիս ունենալ այլընտրանքային մոնիտորինգ ու իրավիճակի անկողմնակալ գնահատում՝ ի հավելումն գործընթացի անմիջական կողմերի (ԵՄ անդամ երկրների հյուպատոսական ծառայություններ, Հայաստանի պետական մարմիններ և սովորական դիմորդներ) պաշտոնական տվյալների, գնահատականների ու կարծիքների: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ ենք համարում և այս մոնիտորինգի անցկացումը, և քաղաքացիական հասարակության շահագրգիռ կողմերին ներգրավել այս ոլորտում ընթացող գործընթացներին:

Այս ոլորտում Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոնը (ԳՏՀՎԿ) հատկապես վերջին վեց տարիներին լայն գործունեություն է ծավալել. արդեն պատրաստվել ու հրատարակվել են 2014–2018 թվականների մոնիտորինգների հաշվետվությունները[12]՝ ըստ թիրախային խմբերի ներկայացնելով համապատասխան եզրակացություններ և առաջարկություններ, ընդունվել են հրապարակային հայտարարություններ վիզային ոլորտի, Հայաստանում գործող վիզա կենտրոնների աշխատանքի, կենսաչափական անձնագրերի հետ կապված, ինչպես նաև միջազգային փորձագետների աջակցությամբ ներկայացրել է «ՀՀ և ԵՄ միջև սիմետրիկ /համաչափ/ առանց վիզայի ռեժիմի ճանապարհային քարտեզի կազմման ու իրականացման համար առաջարկություններ» հետազոտությունը[13], որին միացել են նաև մի խումբ հասարակական կազմակերպություններ: Ի լրումն վերոնշյալի, ՀՀ–ԵՄ մուտքի արտոնագրերի ազատականացման երկխոսության մեկնարկին էր ուղղված նաև ԳՏՀՎԿ-ի և «Եվրոպական կայունության նախաձեռնություն»

11 Մոնիտորինգը նպատակ ունի հնարավորինս արագ բացահայտել փաստացի և հնարավոր նվաճումները և թերացումները, ինչպես նաև խթանել դրանց շտկումն ու հաղթահարումը: http://www.ampartners.am/service/monitoring-and-evaluation.html

12 ԵՄ և ՀՀ միջև վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին Համաձայնագիր (I և II մոնիտորինգ): http://acgrc.am/bokeng.pdf; http://acgrc.am/ENG%20Version.pdf

13 Recommendations on Forming and Implementing the Road Map to the Symmetrical Visa-Free Regime between the EU and Armenia. http://www.osf.am/2015/09/recommendations-on-forming-and-implementing-the-road-map-to-the-symmetrical-visa-free-regime-between-the-eu-and-armenia/

հետազոտական կենտրոնի (“European Stability Initiative” think tank) ներկայացուցիչների և փորձագետների այցը Բրյուսելում տեղակայված ԵՄ կառույցներ (2019թ. նոյեմբերին).

Այցի գլխավոր նպատակն էր տեղեկություններ տրամադրել ԵՄ–Հայաստան Վիզաների դյուրացման համաձայնագրի և Հետընդունման համաձայնագրի կատարման առաջընթացի մասին, կապեր հաստատել եվրոպական կառույցների՝ Հայաստանով և Արևելյան Գործընկերությամբ զբաղվող հիմնական պաշտոնյաների հետ, աջակցել հետընդունման հետ կապված հարցերի լուծմանը և եվրոպական համայնքին տեղեկացնել Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումների մասին: Այցի շրջանակում պատվիրակությունն հանդիպումներ ունեցավ հետևյալ կառույցների ներկայացուցիչների հետ. Միգրացիայի և ներքին գործերի գլխավոր տնօրինության, Արդարադատության և սպառողների պաշտպանության գլխավոր տնօրինության, Հարևանության և ընդլայնման բանակցությունների գլխավոր տնօրինության, Եվրոպական արտաքին գործունեության ծառայության, Եվրոպական խորհրդարանի, ԵՄ-ում Գերմանիայի, Ֆրանսիայի և Նիդեռլանդների մշտական ներկայացուցչությունների, Բելգիայի ներքին գործերի նախարարության, Բելգիայի Փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց հարցերով գլխավոր հանձնակատարի գրասենյակի և Բրյուսելում գործող առաջատար ՀԿ-ների և հիմնադրամների ներկայացուցիչների հետ: Հանդիպումները շատ արդյունավետ անցան՝ միաժամանակ ցույց տալով նաև քաղացիական հասարակության կողմից այս գործընթացի արագացման ուղղությամբ շահագրգռվածությունն ու աջակցությունը:

Սույն բրոշյուրը նվիրված է ՀՀ–ԵՄ-ի միջև վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին և առանց թուույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին համաձայնագրերի կիրարկման 2019թ. մոնիտորինգին: Հետազոտությունը իրականացվել է Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոնի (ԳՏՀՎԿ) փորձագետների կողմից Բաց հասարակության հիմնադրամներ–Հայաստանի աջակցությամբ: Առաջարկությունների նախապատրաստման հարցում աջակցության համար շնորհակալություն ենք հայտնում նաև ԳՏՀՎԿ-ի խորհրդի նախագահ Ս. Գրիգորյանին և փորձագետ Նիկոլայ Իսրայելյանին: Առանձնահատուկ շնորհակալություն ենք հայտնում նաև ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (ՏԿԵՆ) Միգրացիոն ծառայության արտաքին կապերի բաժնի պետ Հայկանուշ Չորանյանին երկրորդ գլխի կազմման ընթացքում արժեքավոր խորհուրդների համար:

ԵՄ հետ կնքած համաձայնագրերի հաջող իրականացման համար, ինչ-

պես նաև վիզաների ազատականացման շարունակման ուղղությամբ շարժվելու համար անհրաժեշտ է բոլոր գործող սուբյեկտների՝ Հայաստանի պետական մարմինների, ողջ հասարակության, հատկապես, հասարակության ակտիվ խմբերի, ինչպես նաև եվրոպական մարմինների կողմից հետևողական աշխատանք: ԳՏՀՎԿ-ն պատրաստվում է հետագայում ևս ակտիվորեն շարունակել հետևել վիզաների ազատականացման գործընթացին՝ շահագրգիռ կողմերին ներկայացնելով առաջարկություններ, ինչն էլ արվել է այս մոնիտորինգում:

Մոնիտորինգի առարկա և մեթոդաբանություն
/2019թ. մոնիտորինգի մեթոդաբանություն/

Սույն ծրագրի մոնիտորինգի առարկան հանդիսանում է ԵՄ-ՀՀ միջև վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին և առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին համաձայնագրերի կիրարկումը: Ծրագրի շրջանակներում իրականացվել է վերոհիշյալ համաձայնագրերի կիրարկման հետ կապված ԵՄ կարճաժամկետ մուտքի արտոնագրերի (խոսքը միայն մինչև 90 օր վավերականությամբ վիզաների մասին է[14]), անօրինական միգրացիայի, առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման, վերաինտեգրման, անձնագրերի ու անձնական տվյալների հետ կապված և այլ ոլորտների համապարփակ ուսումնասիրություն:

Սույն ուսումնասիրության ընթացքում օգտագործվել են հետևյալ մեթոդները.

1. Հայկական ու եվրոպական համապատասխան օրենսդրության վերլուծություն

Ուսումնասիրվել է ոլորտին վերաբերող թե՛ միջազգային, թե՛ ներպետական օրենսդրությունը: Նախ և առաջ ուսումնասիրվել են ԵՄ և ՀՀ միջև վիզայի տրամադրումը դյուրացնելու և առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին համաձայնագրերը[15], ԵՄ Վիզայի օրենսգիրքը («EU Visa Code»)[16] և ԵՄ Վիզայի օրենսգրքում կատարված փոփոխությունները (ուժի մեջ են մտել 2020

14 Schengen Visa Types http://www.schengenvisainfo.com/schengen-visa-types/

15 ԵՄ և ՀՀ միջև վիզայի տրամադրումը դյուրացնելու և առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին համաձայնագրերը: http://www.mfa.am/u_files/file/EU_AM_VFA_am.pdf; http://mfa.am/u_files/file/Agreement_EU_Readmissiom_Arm.pdf

16 Regulation (EC) No 810/2009 of the European Paliament and of the Council of 13 July 2009 establishing a Community Code on Visas (Visa Code). http://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=OJ:L:2009:243:0001:0058:EN:PDF

թվականի փետրվարին)[17], Շենգեն համաձայնագրերը (Schengen Agreements)[18], Դուբլինյան կոնվենցիան[19] և այլն: Ներպետական փաստաթղթերից ուսումնասիրվել են «ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքը, «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, մի շարք այլ օրենքներ ու ենթաօրենսդրական ակտեր, վիզայի, միգրացիայի և ռեադմիսիայի ոլորտների վերաբերյալ ՀՀ կառավարության որոշումները, ծրագրերը, ՀՀ ԱԳՆ տարեկան հաշվետվությունները և այլն: Ուսումնասիրվել են նաև վերադարձի, ռեադմիսիայի և վերաինտեգրման ոլորտում Հայաստանի միգրացիոն քաղաքականությանն առնչվող փաստաթղթերը, ՀՀ Կառավարության 2019թ ծրագիրը, ինչպես նաև՝ ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը (ՀԸԳՀ) և դրա ճանապարհային քարտեզը, որն ՀՀ կառավարության կողմից հաստատվել է 2019 թ. հունիսին[20]: Ուսումնասիրվել է միջազգային փորձը, մասնավորապես՝ Վրաստանի և Մոլդովայի՝ իրենց քաղաքացիների վերադարձի աջակցության առնչությամբ քաղաքականության ուղղությամբ: Ուսումնասիրվել են վերադարձողների իրավունքների և նրանց վերաինտեգրման հիմնախնդիրների բացահայտման վերաբերյալ իրականացված հետազոտություններ: Հավաքագրվել են ռեադմիսիայի և վերաինտեգրման վերաբերյալ վիճակագրական տվյալները:

2. ՀՀ-ում ԵՄ հյուպատոսությունների, ՀՀ-ում գործող վիզաների կենտրոնների և ՀՀ համապատասխան պետական կառույցների գործունեության և կայքերի մոնիտորինգ

Ծրագրի ընթացքում ուսումնասիրվել են ՀՀ-ում եվրոպական երկրների դիվանագիտական ներկայացուցչությունների հյուպատոսական բաժինների, ՀՀ արտաքին գործերի նախարարության, ՀՀ-ում գործող վիզաների կենտրոնների, ՀՀ-ի ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության և ՀՀ ՏԿԵՆ Միգրացիոն պետական ծառայության պաշտոնական կայքերը:

3. Հարցումներ

Օրենսդրության ու գործող կանոնները ուսումնասիրելուց հետո ծրագրի իրականացման առաջին փուլում կազմվել են հարցեր՝ ուղղված ոլորտի

17 https://www.schengenvisainfo.com/news/new-schengen-visa-rules-start-applying-on-sunday-feb-2/, https://ru-ru.facebook.com/ACGRC/

18 Schengen Agreements. http://ec.europa.eu/dgs/home-affairs/e-library/documents/policies/borders-and-visas/schengen-agreements/index_en.htm

19 Convention determining the State responsible for examining applications for asylum lodged in one of the Member States of the European Communities – Dublin Convention(19.08.1997). http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:41997A0819(01)&from=EN

20 https://www.e-gov.am/u_files/file/decrees/varch/2019/19_666_1.pdf

համար պատասխանատու պետական մարմիններին ու ԵՄ անդամ երկրների դիվանագիտական ներկայացուցչությունների հյուպատոսական բաժիններին և Հայաստանում գործունեություն ծավալած վիզաների կենտրոններին: Փորձագիտական հարցումներ են անցկացվել, ինչպես նաև կազմվել են հարցեր՝ ուղղված ոլորտի պատասխանատու պետական մարմիններին, մասնավորապես՝ ՀՀ ՏԿԵՆ Միգրացիոն ծառայությանը, վերաինտեգրման «մեկ պատուհան» ծառայությանը: Հարցերը կազմվել են, հաշվի առնելով թեմայի հասարակության լայն շերտերի համար վիզաների և միգրացիայի կարևորությունը, հատկապես առօրյայում, մամուլում առավել հաճախ հանդիպող խնդիրներն ու դեպքերը, ինչպես նաև 2014–2018թթ. համանման մոնիտորինգի ընթացքում ծագած հարցերը[21]: Անհատական հանդիպումներ են անցկացվել նաև մի շարք ազգային և միջազգային փորձագետների հետ (Գերմանիա, Բելգիա, Ֆրանսիա, Լեհաստան, Լիտվա, Ուկրաինա, Վրաստան և Մոլդովա): Հարցումներ են անցկացվել նաև Շենգենն մուտքի վիզայի հարցում մերժում ստացած, ինչպես նաև բողոք ունեցող դիմորդների շրջանում՝ ընդհանուր պատկերը ավելի ճիշտ հասկանալու համար:

4. Այցելություններ հյուպատոսական ծառայություններ

Ծրագրի իրականացման ընթացքում մի շարք հանդիպումներ են տեղի ունեցել հյուպատոսական ծառայությունների աշխատակիցների, դիվանագետների հետ՝ քննարկելու, պայմաններին ծանոթանալու, վիզաների դիմումների ընդունման ընթացակարգին, ծագած խնդիրների և դրանց լուծման համար նախատեսվող քայլերի և այլն:

5. Էլեկտրոնային մամուլի մշտադիտարկում

Հաշվի առնելով այն, որ այժմ համացանցը տեղեկատվություն ստանալու հիմնական միջոցներից մեկն է, կատարվել է նաև էլեկտրոնային մամուլի մշտադիտարկում, ինչը թույլ է տվել կատարել նշված ոլորտների համեմատական վերլուծություն և հետևել, թե ինչպես են լուսաբանվում սույն ուսումնասիրության առարկա հանդիսացող ոլորտների վերաբերյալ այս կամ այն իրադարձությունները լրատվամիջոցներում՝ ուսումնասիրվել է 2019 թվականի ընթացքում վիզաների, միգրացիայի, վերադարձի, ռեադմիսիայի և մի շարք այլ թեմաների լուսաբանումը մամուլում:

6. Վիճակագրական տվյալների ուսումնասիրություն

Ուսումնասիրվել են Շենգենն վիզաների հետ կապված վիճակագրական տվյալները, ինչպես նաև այս ոլորտում Արևելյան գործընկերություն ծրա-

21 Մոնիտորինգի հաշվետվություն ԵՄ և ՀՀ միջև վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին համաձայնագիր (2014–2017). http://acgrc.am/publications.html

գրի մյուս երկրների փորձը, որոնք արդեն ստացել են ԵՄ հետ առանց վիզայի մուտքի ռեժիմ՝ Մոլդովա, Վրաստան և Ուկրաինա:[22] 2012–2019թթ. վիճակագրական տվյալների համեմատական վերլուծություն է արվել Հայաստանում գործող Շենգենն վիզա տրամադրող հյուպատոսական ծառայությունների կողմից տրված վիզաների ընդհանուր քանակի, ըստ երկրների, ըստ տեսակի, մերժումների և այլն: Նաև հավաքագրվել են ռեադմիսիայի, ապաստանի և վերաինտեգրման վերաբերյալ վիճակագրական տվյալները:

7. Հարցումներ վիզայի դիմորդների շրջանում

Վերջին տարիներին վիզայի ոլորտի հետ կապված մեր կազմակերպության ուսումնասիրությունների ընթացքում հանդիպել ենք բազմաթիվ դեպքերի, երբ դիմորդները դժգոհ են եղել ՀՀ–ում գործող Շենգենն գոտու հյուպատոսության և վիզային կենտրոնների աշխատանքից: Բողոքներ և դժգոհություններ են եղել կայացրած որոշումից, երբ դիմորդը համաձայն չի եղել մերժման և հյուպատոսության կողմից ներկայացված մերժման հիմքերի հետ; դիմումների ընթացակարգից, երբ դիմորդը բողոքել է հարցազրույց նշանակելու հետ կապված դժվարություններից; հյուպատոսությունում և վիզա կենտրոններում դիմումների հանձնման և հարցազրույցի մեծ հերթերից; սպասասրահների բացակայությունից կամ դրանց վատ պայմաններից; սպասարկող անձնակազմի վատ վերաբերմունքից և այլն: Ուսումնասիրության արդյունքում եկել ենք եզրահանգման, որ այդ հարցերին պետք է առավել մեծ ուշադրություն դարձնել, ներգրավելով նաև այդ գործընթացի մյուս կողմին՝ դիմորդներին, հաշվի առնելով, որ շատ հաճախ նրանց դժգոհությունը կարող է լինել գործող կանոնների ու օրենքների չիմացության պատճառով կամ էլ ուղղակի սուբյեկտիվ մոտեցման պատճառով:

ՀՀ–ում որոշ դեսպանությունների հյուպատոսական բաժիններ, որոշ դեպքերում մերժում են վիզայի տրամադրումը առանց պատշաճ հիմնավորման: Նման դեպքերի մասին կա քաղաքացիների մի շարք բողոքներ, դժգոհություններ, այդ թվում հարցը բարձրացվում է նաև սոցիալական ցանցերում: Վիզայի մերժման հիմքերը շարադրված են Վիզա կոդի Հոդված 32–ում և մերժման ծանուցման հատուկ ձևաթղթում (Հավելված VI)[23]: Մերժման դեպքերի ուսումնասիրությունը ավելի ամբողջական դարձնելու նպատակով հարցումներ են անցկացվել նաև մերժում ստացած

22 Այդ դրույթը վերաբերվում է միայն կենսաչափական անձնագիր ունեցողներ քաղաքացիներին:

23 Regulation (EC) No 810/2009 of the European Parliament and of the Council of 13 July 2009 establishing a Community Code on Visas (Visa Code) (15.09.2009). http://eur–lex.europa.eu/legal–content/en/TXT/?uri=CELEX:32009R0810

քաղաքացիների շրջանում, ինչպես նաև հյուպատոսությունների ու վիզա կենտրոնների աշխատանքից դժգոհ քաղաքացիների շրջանում:

Դրանից բացի 2019թ. ստացել ենք 128 գրավոր բողոք՝ կապված վիզայի մերժման կամ վիզայի ստանալու ընթացքում խնդիրների հետ, որոնք տարբեր բնույթի են եղել: Դրանցից կարելի է առանձնացնել մի քանիսը, երբ, օրինակ, վիզա կենտրոնը հրաժարվում էր անվճար վիզայի համար ընդունել գիտաժողովի մեկնող հասարակական կազմակերպության ներկայացուցչի փաստաթղթերը, կամ, երբ վիզա կենտրոնը չէր ընդունում երեխայի վերաբերյալ նոտարական վավերացմամբ փաստաթղթերը՝ պահանջելով վիզա ստանալիս երեխայի երկու ծնողների ներկայությունը:

Այնուամենայնիվ, 2019 թվականի ընթացքում Հայաստանի քաղաքացիների համար արձանագրվել են երկու հիմնական տեսակի խնդիրներ (հենց այդ հարցերի կապակցությամբ ենք ստացել ամենամեծ թվով բողոքները): Առաջինը կապված էր նրա հետ, որ քաղաքացիները չէին կարողանում էլեկտրոնային փոստով գրանցվել Հայաստանում ԵՄ անդամ պետությունների հյուպատոսական ծառայություններ այցելելու նպատակով: Հյուպատոսարանների մեծ մասն անցել է պարտադիր էլեկտրոնային հերթագրման համակարգի: Վերջինիս ներդրումը դիմողների հերթերի և կուտակումների գոյացման հետ կապված խնդիրների լուծմանն ուղղված առաջին քայլերից էր: Մենք ժամանակին ողջունեցինք այդ քայլը: Այնուամենայնիվ, գործնականում պարզվեց, որ Հայաստանի քաղաքացիները չէին կարողանում գրանցվել փաստաթղթերն հյուպատոսությանն հանձնելու համար, քանի որ բոլոր ազատ տեղերը շատ արագ էին զբաղեցվում: Մենք բազմաթիվ բողոքներ ստացանք այս հարցի վերաբերյալ, և խնդիրը շատ ակտիվորեն քննարկվում էր հայկական մամուլում և սոցիալական ցանցերում: Դժվար է միանշանակ պատասխան տալ այն հարցին, թե ինչու են խափանումներ արձանագրվել քաղաքացիների գրանցման էլեկտրոնային համակարգում, սակայն բացատրություններից մեկը կապված էր այն խնդրի հետ, որ զբոսաշրջային ընկերություններն ակտիվորեն ամրագրում էին տեղերը (պահուստային տարբերակով) Եվրոպա մեկնող իրենց հաճախորդների համար: Հաջորդ գործոնն այն է, որ Եվրոպա այցելել ցանկացող՝ Հայաստանի քաղաքացիների թիվը վերջին տարիներին կտրուկ ավելացել է, և հյուպատոսական ծառայությունների տեխնիկական կարողությունները բավարար չեն եղել քաղաքացիների պահանջարկը բավարարելու համար:

Երկրորդ հարցը կապված է Հայաստանի քաղաքացիների կողմից բազմակի մուտքի շենգենյան վիզաների ստացման հետ: ԵՄ և Հայաստանի միջև վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին համաձայնագիրն Հայաստանի քաղաքացիներին թույլ է տալիս ԵՄ այցելելու դրական

փորձառության հիման վրա ստանալ մեկից մինչև հինգ տարի ժամկետով բազմակի մուտքի շենգենյան վիզա: Այսպես, 2019 թվականին Հայաստանի քաղաքացիները բախվեցին այն խնդրին, որ Հայաստանում ԵՄ մի շարք հյուպատոսարաններ չէին ցանկանում բազմակի մուտքի իրավունքով վիզաներ տրամադրել: Իրավիճակն հասնում էր անհեթեթության աստիճանի, երբ նախկինում բազմակի մուտքի մի քանի վիզաներ ունեցած, Եվրոպա տասնյակ անգամներ այցելած և կացության եվրոպական կանոնները չխախտած մարդիկ վիզա էին ստանում ընդամենը մի քանի օրով՝ կոնկրետ միջոցառման մասնակցելու համար, կամ՝ իսպառ մերժվում էին: Դա լուրջ դժգոհություն առաջացրեց հայ հասարակությունում, քանի որ մերժված դիմողների թվում էին հայտնի քաղաքական և հասարակական գործիչներ, մշակույթի և սպորտի վաստակավոր գործիչներ: Մնում է հույս կապել ԵՄ վիզաների օրենսգրքի («Visa Code») մեջ փոփոխությունների ընդունման հետ (ուժի մեջ է մտել 2020 թվականի փետրվարին), որոնցում կարևորվում է բազմակի մուտքի իրավունքով վիզաների ստացումը հեշտացնելը:

Սակայն եղել են նաև դեպքեր, երբ բողոքողները չեն կարողացել հստակ ներկայացնել իրենց դժգոհության պատճառները՝ հրաժարվելով պատասխանել հավելյալ հարցերի կամ էլ ներկայացնել փաստաթղթեր: Դա իր հերթին խոսում է այն մասին, որ որոշ դեպքերում դիմորդները անազնիվ մղումներ ունեն ու թաքցնում են որոշակի հանգամանքներ: Սխալ կամ թերի դիմում-հայտերի ներկայացնելը խոսում է դիմորդների կողմից օրենքների, վիզայի դիմելու պահանջների չիմացության մասին: Իրազեկության բարձրացումը սույն ծրագրի կարևրագույն նպատակներից մեկն է:

Կարևորելով Շենգենն վիզայի մերժման դեպքերի ուսումնասիրությունը և այդ հարցումները շարունակական դարձնելու նպատակով՝ ԳՏՀՎԿ-ի կայքում տեղադրվել է հայտարարություն, ըստ որի ՀՀ-ում ԵՄ անդամ երկրների դեսպանությունների հյուպատոսական ծառայությունների կողմից մերժում ստացած քաղաքացիները կարող են մերժման մասին տեղեկատվություն տրամադրել[24], ինչը սակայն չի ենթադրում աջակցություն վիզայի ստացման հարցում, այլ կօգնի կատարել մերժման դեպքերի վերլուծություն՝ հետագայում ՀՀ-ում ԵՄ անդամ երկրների հյուպատոսական ծառայությունների և ԵՄ կառույցների համար առաջարկություններ կազմելու հարցում:

24 Էլ. հասցե՝ acgrcyerevanoffice@gmail.com

Գլուխ առաջին
ՀՀ–ԵՄ հարաբերությունները վիզաների դյուրացման և ազատականացման շրջանակում

Վիզաների դյուրացումը ԵՄ և Հայաստանի միջև համագործակցության հիմնական ուղղություններից է: Գործընթացը մեկնարկել է Արևելյան գործընկերության ծրագրի շրջանակում՝ 2011 թվականին սկիզբ առնելով «Շարժունակության շուրջ գործընկերությունից», իսկ 2014 թվականին հասնելով ՀՀ–ԵՄ Վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին և Հետընդունման համաձայնագրերին: Եթե Հայաստանը և ԵՄ-ն մեկնարկեն վիզաների երկխոսությունը, ապա այն ուղի կհարթի Հայաստանի քաղաքացիների համար առանց վիզաների ճանապարհորդելու ռեժիմի համար: Վիզաների ազատականացումն ընդգծված է ՀՀ–ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրում (ՀԸԳՀ), և դրա կարևորությունն ընդգծվել է նաև Հայաստանի կառավարության կողմից: Միևնույն ժամանակ, գործընթացը դանդաղեցնող որոշակի խնդիրներ կան, հատկապես՝ կապված Հայաստանից անօրինական միգրացիայի ավելացման ռիսկի հետ: Դրանից զատ, ԵՄ հետ վիզաների ազատականացման համար ՀՀ կառավարությունից պահանջվում է ընդունել խտրականության դեմ պայքարի մասին օրենքը: Ուստի, ակնկալվում է, որ Հայաստանը ժողովրդավարական բարեփոխումների կամք կցուցաբերի և ավելի սերտորեն կհամագործակցի ԵՄ հետ Հետընդունման համաձայնագրի իրականացման աշխատանքներում:

Սույն գլխում ընդգծված են ԵՄ և Հայաստանի միջև համագործակցությանն առնչվող հիմնական զարգացումները: Առաջին Մասը նվիրված է ՀՀ–ԵՄ «Շարժունակության շուրջ գործընկերության» հիմնական զարգացումներին և վիզաների ազատականացման վերջին փուլի համար ձեռնարկված քայլերին: 2–րդ Մասում ներկայացվում են ՀՀ քաղաքացիներին տրված շենգենյան վիզաների վիճակագրության վերլուծությունը և մերժման ցուցանիշները: Ներկայացված են նաև Վրաստանի փորձից քաղված դասերը, քանի որ այդ պետությունն արդեն իսկ օգտվում է վիզայազերծ ռեժիմից: 3–րդ Մասը նվիրված է Վիզաների դյուրացման համաձայնագրի՝ Հայաստանի կողմից իրագործմանը, իսկ 4–րդ Մասը նվիրված է եզրակացություններին և առաջարկություններին:

Մաս 1. Վիզաների դյուրացման բնագավառում ՀՀ–ԵՄ հարաբերությունների միտումները

ՀՀ–ԵՄ «Շարժունակության շուրջ գործընկերությունը» և վիզաների դյուրացման գործընթացի մեկնարկը

Ժողովուրդների միջև շփումների ուղղությունը ԵՄ Արևելյան գործընկերության շրջանակում ծավալվող համագործակցության չորս թեմատիկ պլատֆորմներից մեկն է: ԵՄ տարածք մուտք գործելու համար ՀՀ քաղաքացիներից ներկայումս պահանջվում է մուտքի արտոնագրի ստացում:

Շարժունակության բնագավառում հետագա համագործակցության ուղղությամբ առաջին քայլերից մեկը եղավ «Շարժունակության շուրջ գործընկերությունը» ԵՄ և Հայաստանի միջև: «Շարժունակության շուրջ գործընկերության մասին» համատեղ հռչակագիրը ԵՄ–ի և Հայաստանի միջև ստորագրվեց Լյուքսեմբուրգում 2011 թվականի հոկտեմբերի 27–ին՝ կարևոր քայլ դառնալով շարժունակության ոլորտում համագործակցության խորացման համար:[25] Այս փաստաթղթով կողմերը պարտավորվել են բարձրացնել ԵՄ–ի և Հայաստանի միջև քաղաքացիների շարժունակությունը, ինչպես նաև ապահովել միգրացիոն հոսքերի ավելի լավ կառավարում՝ կանխելով և նվազեցնելով անօրինական ներգաղթը:

Հայաստանի հետ գործընկերության իրագործման մասին ԵՄ–ի 2019 թվականի զեկույցում նշվում է, որ «Շարժունակության շուրջ գործընկերությունը» նպաստել է, որպեսզի Հայաստանում միգրացիայի և սահմանների կառավարումը մոտարկվի ԵՄ չափանիշներին, բարձրանա անվտանգության և արտաքին առևտրի մակարդակը:[26] Տարբեր ծրագրեր են իրականացվել Հայաստանում սահմանների կառավարումը բարելավելու ուղղությամբ: 2012–2016 թվականներին ԵՄ–ն իրականացրել է «Հայաստանի միգրացիայի կառավարման կարողությունների հզորացումը՝ հատուկ ուշադրություն դարձնելով ՀՀ–ԵՄ շարժունակության շուրջ գործընկերության շրջանակում հետընդունման աշխատանքներին» ծրագիրը, նպատակ ունենալով հզորացնել իրավասու մարմինների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարողություններն Հայաստանում:[27]

«Շարժունակության շուրջ գործընկերության մասին» համատեղ հռչակագրի ընդունումից հետո 2012թ. փետրվարին Երևանում մեկնար-

25 «Շարժունակության շուրջ գործընկերության մասին» համատեղ հռչակագիրը Եվրոպական միության և Հայաստանի միջև:
http://www.consilium.europa.eu/uedocs/cms_data/docs/pressdata/en/jha/125698.pdf

26 Գործընկերության իրագործման զեկույցն Հայաստանի վերաբերյալ, 2019թ., https://eeas.europa.eu/sites/eeas/files/partnership_implementation_report_armenia.pdf

27 https://eeas.europa.eu/headquarters/headquarters-homepage/11239/strengthening-armenias-migration-management-capacities-with-special-focus-on-reintegration-activi-

կեցին ԵՄ վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին և հետընդունման համաձայնագրերի շուրջ բանակցությունները: Վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին համաձայնագիրը ստորագրվեց ԵՄ և Հայաստանի միջև 2012թ. դեկտեմբերի 17-ին, իսկ Հետընդունման մասին համաձայնագիրը՝ 2013թ. ապրիլի 19-ին:[28] Արևելյան գործընկերության ծրագրի շրջանակում մեկնարկեց վիզաների ազատականացման բուն գործընթացը, որով նախատեսվեց ավելի լայն համագործակցություն, այդ թվում՝ ասոցացման համաձայնագրի ստորագրումը՝ խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի (ԽՀԱԱՀ) հետ միասին: Ասոցացման համաձայնագիրը երկկողմ համաձայնագիր էր ԵՄ և Արևելյան գործընկերության պետությունների (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Մոլդովա, Ուկրաինա և Բելառուս) միջև, որը պետք է համագործակցության հիմնական իրավական հիմքը դառնար: Համաձայնագրով նախատեսվում էր քաղաքական երկխոսություն արտաքին գործերի և անվտանգության բնագավառում, արդարադատության և ներքին գործերի բնագավառում, տնտեսական և ոլորտային համագործակցության բնագավառում, մինչդեռ ԽՀԱԱՀ-ն նախատեսում էր ավելի խորը տնտեսական համագործակցություն և օրենսդրության ներդաշնակեցումը ԵՄ համայնքային օրենսդրությանը («acquis communautaire»): Երկու փաստաթղթերը նաև օգնելու էին Հայաստանին իրավունքի գերակայության հաստատման, բարեխիղճ կառավարման և ԵՄ հետ քաղաքական և տնտեսական համագործակցության ամրապնդման առումներով:

Այնուհանդերձ, 2013 թվականի սեպտեմբերի 3-ին, չնայած ԵՄ հետ ակտիվ բանակցություններին և ներդրված ջանքերին, Հայաստանը դադարեցրեց ԵՄ հետ ասոցացման շուրջ տարվող բանակցություններն ու սկսեց Ռուսաստանի կողմից առաջնորդվող Մաքսային միությանը և Եվրասիական տնտեսական միությանն (ԵԱՏՄ) անդամագրվելու գործընթացը:

Ասոցացման համաձայնագիրը և ԽՀԱԱՀ-ն ստորագրելուց հրաժարվելը տեղի ունեցավ հենց այն օրերին, երբ Հայաստանի Նախագահ Սերժ Սարգսյանը պաշտոնական այցով Մոսկվայում էր: 2013 թվականի սեպտեմբերի 3-ին Մոսկվա կատարած պաշտոնական այցի շրջանակում Սարգսյանն հայտարարեց, որ Հայաստանի Հանրապետությունը որոշում է կայացրել անդամակցել Ռուսաստանի կողմից առաջնորդվող Մաքսային միությանը: ԵՄ հետ Ասոցացման համաձայնագիրը ստորագրելուց այդպես հանկարծակի հրաժարվելն ակնհայտորեն վկայում էր Ռուսաստանից Հայաստանի կախվածության մասին: 2015 թվականի հունվարի 2-ին

ties-in-the-framework-of-the-eu-armenia-mobility-partnership_sr

28 Շարժունակության շուրջ գործընկերությունը, վիզաների դյուրացումը և հետընդունման համաձայնագրերը. https://ec.europa.eu/home-affairs/what-we-do/policies/international-affairs/eastern-partnership/mobility-partnerships-visa-facilitation-and-readmission-agreements_en

Հայաստանն անդամակցեց Եվրասիական տնտեսական միությանը և դարձավ ԵՏՄ լիակատար անդամ՝ Բելառուսի, Ղազախստանի և Ռուսաստանի հետ միասին:[29]

Հարկ է նշել, որ թեպետ Հայաստանը 2013 թվականին հրաժարվեց ստորագրել Ասոցացման համաձայնագիրը, հետագայում ԵՄ հետ միասին մշակվեց նոր համաձայնագիր՝ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը (ՀԸԳՀ): ՀԸԳՀ-ի բանակցությունները մեկնարկեցին 2015 թվականի դեկտեմբերի 7-ին,[30] և համաձայնագիրը ստորագրվեց 2017 թվականի մարտի 21-ին: Այս անգամ Հայաստանի կառավարությունը հանձնառություն ցուցաբերեց նոր Համաձայնագրի նկատմամբ, և 2018 թվականի ապրիլի 11-ին Հայաստանի Ազգային ժողովը միաձայն քվեարկությամբ վավերացրեց Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև:[31]

ՀԸԳՀ-ում ներառված է հստակ հանձնառությունը ժողովրդավարական բարեփոխումներին, մասնավորապես՝ ժողովրդավարական կառույցների արդունավետության բարձրացմանը, մարդու իրավունքների հարգմանը, դատական համակարգի արդյունավետությանը և կոռուպցիայի դեմ պայքարին: Դրույթներ կան նաև տնտեսական համագործակցության, հանուն կլիմայի իրականացվող միջոցառումների և գյուղատնտեսության զարգացման մասին:

Քաղաքական ոլորտում համագործակցության հստակ հանձնառությունից զատ՝ ՀԸԳՀ-ում կարևորվում է նաև շարժունակության և վիզաների ազատականացման գործընթացի դերը: Համագործակցությունն այս ոլորտում ներառված է 3-րդ բաժնում, որը նվիրված է արդարադատությանը, ազատությանը և անվտանգությանը: Համաձայնագրի 15-րդ գլուխը՝ «Մարդկանց շարժը և հետընդունումը», ներառում է Վիզաների դյուրացման համաձայնագի միջոցով քաղաքացիների շարժունակությանն աջակցելու և Հետընդունման համաձայնագրի կատարման միջոցով անկանոն միգրացիայի դեմ պայքարի հանձնառությունը: Դիտարկվում է նաև վիզաների շուրջ երկխոսությունն Հայաստանի հետ ապագայում մեկնարկելու տարբերակը՝ պայմանով, որ ապահովվի պատշաճ կերպով կառավարվող շարժունակության գործընթացը:[32] Փաստաթղթով նախա-

29 Հայաստանն անդամակցեց Եվրասիական տնտեսական միությանը. http://www.eurasiancommission.org/hy/nae/news/Pages/02-01-2015-1.aspx

30 Հայաստանի հետ շրջանակային համաձայնագրի բանակցությունների մեկնարկը (13-ը հոկտեմբերի, 2015թ.), http://eeas.europa.eu/delegations/armenia/press_corner/all_news/news/2015/2015_10_13_hy.htm

31 ՀՀ Ազգային ժողովը վավերացրեց ՀՀ-ԵՄ նոր շրջանակային համաձայնագիրը, https://www.mfa.am/hy/press-releases/2018/04/11/dfm-na-cepa/8126

32 ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր, https://eeas.eu-

տեսվում է նաև համագործակցություն կազմակերպված հանցավորության և ահաբեկչության դեմ պայքարի ոլորտում:

Վիզաների ազատականացման շուրջ Հայաստանի հետ երկխոսության մեկնարկի փակուղային վիճակը

Հայաստանի 2018 թվականի Թավշյա հեղափոխությունից հետո, մասնավորապես՝ 2018 թվականի մայիսի 9-ին սկսելով իր պաշտոնավարումը, ՀՀ Վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց. «Այս առումով շատ կարևոր ենք համարում ՀՀ-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության մասին համաձայնագիրը: Հույս ունենք, որ այդ համաձայնագիրը Եվրամիության երկրներում կվավերացվի հնարավորինս արագ: Հաջորդ հարցը, որի շուրջ մենք հույս ունենք հնարավորինս արագ սկսել բանակցությունները, դա ՀՀ քաղաքացիների համար Եվրամիության մուտքի արտոնագրային ռեժիմի վերացումն է: Հույս ունեմ, որ մենք կոնկրետ արդյունքներ կգրանցենք այդ կապակցությամբ»:[33]

Վիզաների ազատականացման գործընթացը և դրա կարևորությունը քննարկվել են Հայաստանի և ԵՄ տարբեր պաշտոնատար անձանց կողմից: Օրինակ, 2019 թվականի ապրիլի 30-ին ՀՀ Ազգային ժողովի Եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովն հյուրընկալեց Միգրացիոն քաղաքականության զարգացման միջազգային կենտրոնի ներկայացուցիչներին: Հանդիպման ընթացքում նշվեց, որ Հայաստանը զգալի առաջընթաց է ունեցել կենսաչափական անձնագրերի ներդրման, սահմանային հսկողության բարելավման և երկրի հյուսիսային սահմանային անցակետի արդիականացման ուղղություններով:[34]

Միևնույն ժամանակ, վիզաների ազատականացման երկխոսության մեկնարկի հետ կապված հիմնական խնդիրներից են նաև անկանոն միգրացիան և հայկական կողմից ապաստան հայցողների թվի ավելացման ռիսկը: 2019 թվականի մայիսի 15-ին Բրյուսել կատարած այցի շրջանակում տված հարցազրույցի ընթացքում Արտաքին գործերի նախարար Զոհրաբ Մնացականյանը նշեց, որ վիզաների ազատականացման երկխոսությունն առաջնահերթություն է Հայաստանի համար: Անդրադառնալով այն հանգամանքին, որ ԵՄ-ն նշել է ազատականացված ռեժիմի չարաշահումների ռիսկերի մասին, Մնացականյանն այնուհանդերձ ավելացրեց, որ Հայաս-

---

ropa.eu/sites/eeas/files/eu-armenia_comprehensive_and_enhanced_partnership_agreement_cepa.pdf

33 «Հետաքրքիր կլինի տեսնել, թե ինչպես է ՀՀ նոր կառավարությունը լուծում այդ հարցը» (12.05.18): https://168.am/2018/05/12/949889.html

34 Քննարկվել են ԵՄ-ի հետ Հայաստանի քաղաքացիների համար վիզաների ազատականացմանն առնչվող հարցեր, http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=11489&year=2019&month=04&day=30&lang=eng

տանի բոլոր համապատասխան գերատեսչությունները, որոնք առնչություն ունեն միգրացիայի հետ, շփման մեջ են եվրոպական համապատասխան փորձագետների հետ գնահատելու համար՝ որքանով են Հայաստանի կարողությունները զարգացած, որքանով են նրանք համապատասխանում չափանիշների, որպեսզի Հայաստանը կարողանա սկսել վիզաների ազատականացման երկխոսությունը:[35]

Դրանից զատ, 2019թ. հունիսի 13-ին՝ ԵՄ և Հայաստանի միջև Գործընկերության կոմիտեի նիստից հետո համատեղ հայտարարություն հրապարակվեց, որում նշվեց, որ ԵՄ-ն և Հայաստանը կշարունակեն աջակցել քաղաքացիների շարժունակությանը՝ Վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին և Հետընդունման համաձայնագրերի միջոցով, և «ժամանակի ընթացքում կդիտարկեն վիզաների ազատականացման երկխոսություն բացելու նպատակահարմարությունը՝ պայմանով, որ ապահովված լինեն պայմաններ լավ կառավարվող և անվտանգ շարժունակության համար»:[36] Այնուամենայնիվ, չնայած վիզաների ազատականացման գործընթացի կարևորությունը կրկնելուն, ԵՄ-ն ըստ ամենայնի ժողովրդավարական ավելի լուրջ հանձնառություններ է սպասում Հայաստանի կողմից, որոնք կնվազեցնեն անկանոն միգրացիոն հոսքն Հայաստանից: Բարեփոխումների արդյունքում Հայաստանը պետք է ապացուցի, որ ի զորու է արդիականացնել երկիրը և ժողովրդավարության, մարդու իրավունքների և իրավունքի գերիշխանության վրա խարսխված ամուր հիմքեր ստեղծել երկրի պետական կառավարման կառուցվածքը Եվրոպական միության չափանիշներին մոտարկելու համար:

Կարևոր է նշել Իրագործման զեկույցի մասին, որն հրապարակվեց ԵՄ կողմից 2019 թվականի մայիսի 20-ին, և որում նշվում են Հայաստանի կողմից կատարված դրական քայլերը և այն ոլորտները, որոնցում բարելավումներ են անհրաժեշտ: Իրագործման զեկույցում նշվում է Վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին և Հետընդունման համաձայնագրերի կատարման մասին, ինչպես նաև ՀՀ-ԵՄ վիզաների ազատականացման գործընթացը մեկնարկելու ցանկության մասին: Միևնույն ժամանակ, Զեկույցում նշվում է վերադարձի ցուցանիշը բարելավելու անհրաժեշտության մասին: Զեկույցում նշվել է նաև Վիզաների դյուրացման համաձայնագրի գոհացուցիչ կատարման մասին և բազմակի մուտքի իրավունքով վիզաների տրամադրման ցուցանիշի ավելացման մասին: Մերժման դեպքերն

35 News.am, ՀՀ արտաքին գործերի նախարար Մնացականյան. «ԵՄ-ի հետ վիզաների ազատականացումը մեծ նշանակություն ունի, ինչը շատ սկզբունքային հարց է մեզ համար», https://news.am/eng/news/512683.html

36 Համատեղ մամլո հաղորդագրություն, https://www.consilium.europa.eu/en/press/press-releases/2019/06/13/joint-press-statement-following-the-second-partnership-council-meeting-between-the-eu-and-armenia/

հիմնականում կապված են եղել դիմողների կողմից ճանապարհորդության պատճառների մասին բավարար փաստաթղթեր չներկայացնելու հետ:[37]

Մեր մոնիտորինգը ցույց է տվել (մանրամասների համար տե՛ս վերևում՝ «Մոնիտորինգի առարկա և մեթոդաբանություն»), որ չնայած բազմակի մուտքի իրավունքով վիզաների տրամադրման ցուցանիշի ավելացմանը, այդ վիզաների ստացման գործընթացում այնուհանդերձ կան խնդիրներ: Հայաստանի քաղաքացիների մի զգալի մասին (մարդկանց, ովքեր շենգենյան գոտի այցելելու դրական պատմություն ունեն) 2019 թվականին մերժվել է բազմակի մուտքի իրավունքով վիզաների տրամադրումը: Խոսքը չի գնում այն մասին անգամ, որ բազմաթիվ քաղաքացիներ հյուպատոսարաններում չեն տեղեկացվում բազմակի մուտքի իրավունքով վիզա ստանալու իրենց իրավունքի մասին: 2019 թվականին ծագած մյուս խնդիրն այն էր, որ մեծաթիվ քաղաքացիներ չէին կարողանում էլեկտրոնային փոստով գրանցվել Հայաստանում ԵՄ անդամ պետությունների հյուպատոսական ծառայություններ այցելելու նպատակով: Եվ թեպետ պաշտոնապես նրանց վիզայի տրամադրումը չէր մերժվում, այնուհանդերձ՝ այդ իրավիճակը կարելի է դիտարկել որպես մերժման տեսակ, որը ներառված չէ պաշտոնական վիճակագրության մեջ:

Հետընդունման համաձայնագրի շրջանակում համագործակցությունն ավելացնելու անհրաժեշտությունից զատ՝ Հայաստանին անհրաժեշտ է ընդունել խտրականության դեմ պայքարի մասին օրենք և վավերացնել Ստամբուլյան կոնվենցիան: Իրավական այս երկու փաստաթղթերն անհրաժեշտ են Հայաստանում ժողովրդավարական միտումների ամրապնդման և ԵՄ հետ վիզայազերծ ճանապարհորդության ռեժիմ ստանալու համար:

Մաս 2. Շենգենյան վիզայի դիմումներն Հայաստանում և միգրացիոն հոսքերի պատկերը

ՀՀ-ԵՄ Վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին համաձայնագիրը

ՀՀ-ԵՄ Վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին համաձայնագիրը կարևոր առավելություններ է ընձեռել՝ կապված վիզաների համար դիմելու գործընթացի, վիզաների վճարների և Հայաստանի քաղաքացիներից պահանջվող փաստաթղթերի հետ: Համաձայնագրի 6-րդ հոդվածի համաձայն, Հայաստանի բոլոր քաղաքացիների համար գործում է վիզայի ավելի ցածր վճար՝ 35 եվրո, և ինչպես նշված է Համաձայնագրի 7-րդ հոդվածում, վիզա

37 Գործընկերության իրագործման զեկույցն Հայաստանի վերաբերյալ, 2019 ., https://eeas.europa.eu/sites/eeas/files/partnership_implementation_report_armenia.pdf

տրամադրելու մասին որոշումը կայացվում է 10-օրյա ընթացակարգով (որոշ դեպքերում այն կարող է երկարացվել մինչև 30 օր): Բացի դրանից, մարդկանց մի շարք խմբեր՝ գործարարներ, լրագրողներ, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ և ԵՄ-ում բնակվող հայերի ազգականներ, օգտվում են ստանդարտացված և ավելի քիչ պահանջվող փաստաթղթեր ներկայացնելու հնարավորությունից (տես հոդված 4): Ավելին, զգալի թվով մարդիկ՝ պաշտոնական պատվիրակություններ, գիտնականներ, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, ուսանողներ, մարզական միջոցառումների մասնակիցներ, թոշակառուներ և բազմաթիվ այլ անձինք, ազատված են վիզաների վճարներից (հոդված 6):[38]

Հարկ է նշել, որ ի լրումն նշված առավելությունների, որոնցից են վիզաների տրամադրման արագացված ընթացակարգը, վիզաների վճարների կրճատումը և վիզաներից ազատումը, Վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին համաձայնագրով էական առավելություններ են նախատեսել վիզաների տևողության առումով: 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, Անդամ պետությունների դիվանագիտական առաքելությունները և հյուպատոսարանները բազմակի մուտքի իրավունքով և մեկ տարի ժամկետով վիզաներ են տալիս[39] գիտական և մշակութային միջոցառումների մասնակիցներին, ուսանողներին, լրագրողներին, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին, բժշկական պատճառներով կանոնավոր այցեր կատարելու կարիք ունեցողներին, գործարարներին և միջազգային մարզական միջոցառումների մասնակիցներին՝ պայմանով, որ նախորդ տարվա ընթացքում նրանք ստացել են առնվազն մեկ վիզա և օգտագործել են այն այցելվող պետության մուտքի և կացության մասին օրենքների պահանջներին համապատասխան: Մարդկանց նշված խմբերին կարելի է բազմակի մուտքի իրավունքով վիզաներ տալ նվազագույնը 2 և առավելագույնը 5 տարի վավերության ժամկետով՝ պայմանով, որ նախորդ

38 Համաձայնագիր Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին, 31-ը հոկտեմբերի, 2013թ., https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:22013A1031(01)&from=EN

39 Միանգամյա վիզայի դեպքում իրավունք է տրվում գտնվելՇենգեն գոտումվիզայի վրա նշված օրերի քանակով(օրինակ՝ 15 օր): Իսկ բազմակի մուտքի իրավունքով վիզաների դեպքում թույլատրվում է գտնվել Շենգեն գոտում մինչև 90 օր յուրաքանչյուր 180 օր ժամանակահատվածի ընթացքում: Վիզայի Շենգեն գոտում նացորդ օրերի մասին կարող եք տեղեկանալ՝ օգտվելովԵվրոպական հանձնաժողովի պաշտոնական «Շենգենյան հաշվիչից»՝
http://ec.europa.eu/dgs/home-affairs/what-we-do/policies/borders-and-visas/border-crossing/schengen_calculator_en.html: Երկաժամկետ վիզաների (90 օրից ավելի) տրամադրման ընթացակարգերը չեն սահմանվում ԵՄ Վիզա կանոնակարգով և կանոնակարգվում են ազգային օրենսդրությամբ (Regulation (EU) No 265/2010 of the EP and of the Council of 25 March 2010 Amending the Convention Implementing the Schengen Agreement and Regulation (EC) No 562/2006 as regards to movement of persons with long-stay visa, OJ (2010) L 85/1 (31.03.2010) http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/HTML/?uri=OJ:L:2010:085:FULL&from=CS):

2 տարիներին նրանք օգտագործել են բազմակի մուտքի իրավունքով և մեկ տարի ժամկետով վիզան այցելվող պետության մուտքի և կացության մասին օրենքների պահանջներին համապատասխան:[40] Հիմնավորված հրատապ դեպքերում հյուպատոսարանը կարող է դիմողներին թույլատրել, որ նրանք դիմումները ներկայացնեն կամ առանց հանդիպման ժամ վերցնելու, կամ անմիջապես նշանակվող հանդիպման ընթացքում:

Վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին համաձայնագրի իմաստով՝ պետություններ կարող են բաժանվել չորս խմբերի:

1. Շենգենյան համաձայնագրերի լիիրավ անդամ պետություններ (Ավստրիա, Բելգիա, Գերմանիա, Դանիա, Էստոնիա, Իսլանդիա, Իսպանիա, Իտալիա, Լատվիա, Լեհաստան, Լիխտենշտեյն, Լիտվա, Լյուքսեմբուրգ, Հունաստան, Հունգարիա, Մալթա, Նիդեռլանդներ, Նորվեգիա, Շվեդիա, Շվեյցարիա, Չեխիա, Պորտուգալիա, Սլովակիա, Սլովենիա, Ֆինլանդիա և Ֆրանսիա), որոնց համար պարտադիր են համաձայնագրի դրույթները:
2. Թեպետ Իսլանդիան, Լիխտեշտեյնը, Նորվեգիան և Շվեյցարիան շենգենյան համաձայնագրերի լիիրավ անդամներ են, սակայն նրանք ԵՄ անդամներ չեն և չեն միացել ՀՀ և ԵՄ միջև ստորագրված՝ Վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին համաձայնագրին: Ենթադրվում է, որ այդ պետությունները վիզաների տրամադրումը դյուրացնելու վերաբերյալ երկկողմ առանձին համաձայնագրեր կկնքեն Հայաստանի հետ՝ ԵՄ և ՀՀ միջև համաձայնագրի դրույթներին նման դրույթներով (տե՛ս Վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին համաձայնագիրը Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև):[41] Հայաստանն ու Նորվեգիան ստորագրել են նման համաձայնագիր 2015 թվականին:[42] Վիզաների դյուրացման մասին առանձին համաձայնագիրն Հայաստանի և Շվեյցարիայի միջև ուժի մեջ մտավ 2016 թվականին:[43] Իսլանդիայի, Լիխտենշտեյնի և Լյուքսեմբուրգի կառավարությունները և Հայաստանի կառավարությունը դեռևս չեն կնքել երկկողմ համաձայնագրեր:
3. Պետություններ, որոնք շենգենյան համաձայնագրի լիիրավ անդամ չեն, և որոնց հետ անհրաժեշտ է երկկողմ համաձայնագրեր կնքել

40 Համաձայնագիր Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին, 31-ը հոկտեմբերի, 2013թ., https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:22013A1031(01)&from=EN

41 Նույն տեղում:

42 Արմենպրես: Հայաստանն ու Նորվեգիան կստորագրեն վիզաների տրամադրումը դյուրացնելու համաձայնագիր: 26-ը նոյեմբերի, 2015թ., https://armenpress.am/eng/news/827357/armenia-and-norway-to-sign-agreement-on-facilitation-of-visa-issuing-procedure.html

43 Bilateral Relations Switzerland-Armenia: https://www.eda.admin.ch/eda/en/home/representations-and-travel-advice/armenia/switzerland-armenia.html

(Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն, Իռլանդիա և Դանիա): 2018 թվականի մարտի 14-ին Հայաստանի և Դանիայի արտաքին գործերի նախարարները Դանիայում ստորագրեցին Դանիայի և Հայաստանի կառավարությունների միջև վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին համաձայնագիրը:[44] Փաստորեն Դանիան դարձավ 2014թ. ուժի մեջ մտած ԵՄ-ՀՀ միջև ստորագրված Վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին համաձայնագրի մաս չկազմող երկրներից երթական երկիրը, որի հետ կնքվեց նման համաձայնագիր:

4. Պետություններ, որոնք շենգենյան համաձայնագրերի լիիրավ անդամ դառնալու ճանապարհին են, սակայն կարող են միայն ազգային վիզաներ տրամադրել, բայց շենգենյան գոտու համար նախատեսված վիզաները վավերական են նրանց տարածքում (Բուլղարիա, Խորվաթիա, Կիպրոս և Ռումինիա):

Հայաստանի քաղաքացիները կարող են շենգենյան վիզայի համար դիմել Հայաստանում հավատարմագրված և այդ նպատակով գործող հյուպատոսարաններում: Դեսպանությունները կարող են քաղաքացիների վիզաների դիմումներն ընդունելու իրավունքը պատվիրակել նաև վիզաների կենտրոններին: Հայաստանում ներկայումս գործում է շենգենյան գոտու երկրների վիզաների դիմումներ ընդունող Միավորված վիզաների դիմումների կենտրոնը՝ «VFS Global» ընկերությունը, որը բացվել է 2015 թվականին Հայաստանում Լիտվայի և Հունաստանի դեսպանությունների համաձայնությամբ, և վիզայի դիմումներ է ընդունում Լիտվայի, Լատվիայի, Էստոնիայի, Իսպանիայի, Դանիայի, Հունգարիայի և Հունաստանի համար:[45][46] Կարճաժամկետ շենգենյան վիզա ստանալ ցանկացող Հայաստանի քաղաքացիները կարող են դիմել նաև Իսպանիայի վիզաների դիմումների ընդունման կենտրոն, որը Երևանում գործում է 2019 թվականի հունվարի 1-ից (դա «BLS International» ընկերության վիզաների կենտրոնի տարածքային գրասենյակ է, որը ձևակերպում է Մոսկվայում Իսպանիայի գլխավոր հյուպատոսության վիզաներ):

2015 թվականի հոկտեմբերից Հայաստանում Իտալիայի դեսպանությունը նույնպես սկսել է համագործակցել վիզա կենտրոնի, մասնավորապես՝ «TLS Contact» ընկերության հետ, որը դիմումներ է ընդունում նաև Մալթայի

44 ՀՀ և Դանիայի ԱԳ նախարարները ստորագրել են վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին համաձայնագիր.
https://armenpress.am/arm/news/926119/hh-ev-daniayi-ag-nakhararnery-storagrel-en-vizaneri-tramadrumy.html

45 VFS Global. http://www.vfsglobal.com/lithuania/armenia/

46 Վիզայի դիմումներ կարելի է ներկայացնել նաև Լատվիայի, Էստոնիայի, Իսպանիայի, Դանիայի, Հունգարիայի համար, քանի որ Լատվիայի դեսպանությունն Հայաստանում վիզաներ է տրամադրում նաև նշված պետությունների անունից:

և Ֆինլանդիայի համար, քանի որ այդ երկու պետությունների անունից վիզաները տալիս է Իտալիան: 2018 թվականի ապրիլից Երևանում շենգենյան վիզայի դիմումները (Գերմանիայի, Բելգիայի, Նիդեռլանդների, Լյուքսեմբուրգի, Ավստրիայի և Շվեդիայի համար) ընդունելու է ոչ թե Գերմանիայի դեսպանությունը, այլև՝ ծառայություններ մատուցող առանձին ընկերությունը՝ «ՎիզաՄետրիկ» անունով, որն համագործակցում է Գերմանիայի դեսպանության հետ:[47] 2020թ. հունվարի 1-ից Ավստրիան դիմումների ընդունումը պատվիրակել է Երևանում գործող «VFS Global» ընկերությանը:

Վիզաների կենտրոններն ստեղծվել են վիզաների տրամադրման գործընթացին աջակցելու նպատակով, քանի որ դիմումների թիվը շատ մեծ է: Վիզաների կենտրոնները ստանում են այն մեծաթիվ դիմումները, որոնք հյուպատոսարաններն ի զորու չեն ստանալ, և նպատակ են հետապնդում նաև կրճատել հերթերը: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ վիզաների կենտրոնները գործում են միայն մայրաքաղաք Երևանում: Վիզաների կենտրոնները գրասենյակներ չունեն Հայաստանի մարզերում, չնայած որ տրանսպորտային կապի պատճառով բավական դժվար է Երևան հասնել խոշոր քաղաքներից՝ Գյումրիից (Հայաստանի հյուսիս), Վանաձորից (հյուսիս-արևելք) կամ Կապանից (հարավ): Բացի դրանից, վիզաների կենտրոններին դիմողներն հաճախ բողոքում են նրանց կողմից մատուցվող ծառայությունների ցածր որակի մասին՝ կապված մասնավորապես տեխնիկական կարողությունների և հաղորդակցության հմտությունների հետ: Վիզաների կենտրոնները լրացուցիչ վճար են գանձում դիմողներից, որը մեկ դիմումի հաշվով մոտ 20-22 եվրո է:

Կարևոր է նշել, որ Հայաստանի քաղաքացիներն հաճախ քաջատեղյակ չեն Վիզաների օրենսգրքի («Visa Code») և Վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին համաձայնագրի ներքո իրենց ունեցած իրավունքների մասին: Մասնավորապես, նրանցից շատերը չգիտեն վիզայի վճարից ազատման հնարավորությունների մասին: Կան դեպքեր, երբ հյուպատոսարանները և վիզաների կենտրոնները խախտում են այս իրավունքը՝ գանձելով վիզայի վճարը, չնայած որ դիմողն իրավունք ունի ազատվել վիզայի վճարից:

Անչափ կարևոր է, որ 2020 թվականի փետրվարի 2-ից փոփոխվել է Շենգենյան գոտու երկրների մուտքի վիզայի տրամադրման կարգը («Visa Code»): Նոր կարգը հեշտացնելու է կարճաժամկետ վիզաների տրամադրման գործընթացը և հնարավորինս կանխելու է անօրինական միգրացիայի դրսևորումները Եվրամիությունում: Փոփոխություն է տեղի ունեցել վիզաների տրամադրման ժամկետներում: Այսուհետ Հայաստանի քաղա-

47 VisaMetric. https://www.visametric.com/Armenia/Germany/hy

քացիները մուտքի վիզա ստանալու համար կարող են դիմել նախատեսվող ճանապարհորդությունից վեց ամիս առաջ՝ նախկին երեք ամսվա փոխարեն: Բացի այդ, ավելացվել է նաև վիզայի հայտն առցանց լրացնելու հնարավորությունը, որին կարելի է ավելացնել էլեկտրոնային ստորագրություն: Նոր փոփոխությունների համաձայն՝ դիմումատուն պարտավորվելու է անձամբ իր փաստաթղթերը ներկայացնել հյուպատոսական բաժին կամ վիզաների կենտրոն, այն դեպքում, երբ անհրաժեշտ կլինի ստանալ դիմումատուի մատնահետքերը: Հեշտացվել է նաև բազմակի մուտքի իրավունքով վիզայի ստացման գործընթացը: Մասնավորապես, վիզաների դրական պատմություն ունեցող անձինք կարող են ստանալ բազմակի մուտքի իրավունքով վիզա, որի վավերականության ժամկետը մեկ տարվանից աստիճանաբար կբարձրանա 5 տարվա: Վիզաների դրական պատմությունը ենթադրում է ԵՄ տարածք անօրինական մուտքի և հնարավոր խախտումների վերաբերյալ տեղեկատվության բացակայությունը: Ընդ որում, պահպանվել է մուտքի վիզա ստանալու հայտի դիտարկման առավելագույն ժամկետը (15 օր): Սակայն, առանձին դեպքերում, երբ նախատեսվում է փաստաթղթերի առավել մանրամասն ուսումնասիրություն, դիմումի հայտի ուսումնասիրությունը կարող է ձգվել մինչև 45 օր:

ԵՄ անդամ բոլոր երկրների դեսպանատները, հյուպատոսությունները և վիզա կենտրոնները վիզաների դիմումները կդիտարկեն նոր կարգով, որը ներառում է նաև վիզայի տրամադրման գումարի 33%-ով աճ: Բոլոր այն դիմումատուները, որոնք վիզայի ստացման համար նախկինում վճարել են 60 եվրո, այսուհետ կվճարեն 80 եվրո, մինչդեռ 6-12 տարեկան երեխաների վիզան նախկին 35 եվրոյի փոխարեն կարժենա 40 եվրո: Այս կանոնները կգործեն բոլոր այն 105 պետությունների համար, որոնց քաղաքացիներին վիզա է անհրաժեշտ ԵՄ տարածք մուտք գործելու համար: ԵՄ-ի հետ վիզայազերծ ռեժիմի մասին համաձայնագիր ունեցող պետությունների (օրինակ՝ Մոլդովայի, Վրաստանի և Ուկրաինայի) քաղաքացիների համար ամեն ինչ կկմնա անփոփոխ: Այդուհանդերձ, Հայաստանն այն երկրների ցանկում է, որոնց չի վերաբերում վիզայի գնի բարձրացումը: Եվրամիության անդամ երկրների դեսպանատներից մուտքի վիզա ստանալու համար Հայաստանի քաղաքացիները կշարունակեն վճարել 35 եվրո[48]:

48 https://www.schengenvisainfo.com/news/new-schengen-visa-rules-start-applying-on-sun-

Սահմանների կառավարման վերաբերյալ թարմ տեղեկություններ ԵՄ-ից

2017 թվականի նոյեմբերի 20-ին ԵՄ խորհուրդը որոշում ընդունեց մուտքի-ելքի նոր համակարգ (EES) ստեղծելու մասին, ինչպես նաև՝ ընդունեց շենգենյան սահմանային օրենսդրության մուտքի-ելքի համակարգի վերաբերյալ նոր կանոնակարգը, որով նախատեսվում է շենգենյան գոտու սահմանների վրա խստացնել ստուգումները՝ նպատակ ունենալով օժանդակել արտաքին սահմանների կառավարման բարելավմանն ուղղված աշխատանքներին (ավելի արագ հայտնաբերել շենգենյան գոտում նախատեսված օրերից ավելի մնացած անձանց):[49] Նշված փոփոխությունների արդյունքում նոր համակարգ կներդրվի ԵՄ այցելուների՝ ներառյալ ՀՀ քաղաքացիների մուտքի և ելքի համար. անձնագրերում այլևս չեն դրվի կնիքներ, սակայն յուրաքանչյուր ճանապարհորդող կհաշվառվի էլեկտրոնային եղանակով՝ կենսաչափական տվյալների օգտագործմամբ:

Այս համակարգը և «խելացի սահմանների» կիրառությունը թույլ կտան տեղեկություններ արձանագրել շենգենյան գոտու արտաքին սահմաններն հատող՝ այլ պետությունների քաղաքացիների մուտքի, ելքի և մերժման մասին: Դրանք կօգնեն կրճատել սահմանային ստուգումների տևողությունը և բարելավել դրանց որակը՝ ինքնաշխատ համակարգով հաշվելով ժամանող յուրաքանչյուր անձի օրինական կացության տևողությունը: Ակնկալվում է, որ անդամ պետությունները և ԵՄ իրավասու մարմինները կստեղծեն և լիովին կգործարկեն նոր համակարգը 2020 թվականից սկսած:[50]

ԵՄ-ն կենտրոնացված տեղեկատվության երեք համակարգ ունի՝ «Schengen Information System» («SIS»), «Visa Information System» («VIS») և «Eurodac»: «VIS»-ն այն համակարգն է, որով վիզաների դիմումներ և որոշումներ են փոխանակվում և քննարկվում, ինչպես նաև՝ կատարվում է կենսաչափական համադրություն՝ անձը հաստատելու նպատակով կիրառելով մատնահետքի տվյալները: «Eurodac»-ը կենսաչափական տվյալների շտեմարան է, որի մեջ Անդամ պետությունները պարտավոր են մուտքագրել անօրինական միգրանտների կամ ապաստան հայցողների մատնահետքի տվյալները՝ պարզելու համար, թե երբ են նրանք մուտք գործել ԵՄ, և այդ կերպ որոշելու համար, թե ԵՄ որ անդամ պետությունն է պատասխանատու նրանց ապաստանի դիմումը քննարկելու համար: Եվրոպական հանձնաժողովը ներկայացրել է նաև կենսաչափական տվյալների վրա հիմնված

---

day-feb-2/, https://ru-ru.facebook.com/ACGRC/

49 https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX:32017R2226

50 Entry-exit system: final adoption by the Council (20.11.2017). http://www.consilium.europa.eu/en/press/press-releases/2017/11/20/entry-exit-system-final-adoption-by-the-council/; https://www.facebook.com/eucouncil/videos/1522187014497615/

մուտքի/ելքի համակարգ ստեղծելու մասին վերանայված առաջարկ, որը փոխկապակցված կլինի «VIS»-ին և կվերաբերի ԵՄ անդամ չհանդիսացող պետությունների քաղաքացիներին:

Ինչպես նշվեց՝ հիմնական փոփոխություններից կլինի այն, որ սահմանային անցակետում անձնագրերի մեջ կնիք դնելը կփոխարինվի տվյալների շտեմարանում կատարվող գրանցմամբ՝ ավտոմատացնելով ԵՄ քաղաքացի չհանդիսացող անձանց սահմանին ստուգելու ընթացքում տվյալների և տեղեկությունների ստացման նպատակով սահմանապահների կողմից ներկայումս կատարվող գործողությունների մեծ մասը: Ինքնասպասարկման համակարգեր և էլեկտրոնային անցուղիներ կներդրվեն, և ճանապարհորդող այլ պետությունների քաղաքացիների տվյալները կստուգվեն, կլուսանկարվեն, և կվերցվեն նրանց մատնահետքերը, ապա՝ նրանց կտրվեն մի շարք հարցեր: Վիզայի կարիք ունեցող ճանապարհորդները կկարողանան տեսնել իրենց թույլատրված կացության առավելագույն տևողությունը: Երբ ճանապարհորդ ուղղորդվի սահմանային հսկողության կոնկրետ հերթի մեջ, բոլոր այդ տեղեկություններն արդեն հասած կլինեն սահմանապահին, ով կարող է լրացուցիչ հարցեր տալ՝ նախքան անձի մուտքը Շենգենյան գոտու տարածք թույլատրելը:[51]

Այս փոփոխությունների շնորհիվ կհամակարգեն ԵՄ այցելող անձանց նկատմամբ կատարվող ստուգումները: Միևնույն ժամանակ, որոշակի առավելություններ կստեղծեն թե՛ ԵՄ պետությունների, թե՛ այլ պետությունների համար: Ակնկալվում է, որ նախապատրաստական քայլերի ավտոմատացման շնորհիվ կնվազեցվի սահմանապահների աշխատանքային ծանրաբեռնվածությունը և կկրճատվեն երկար հերթերը: Այն ճանապարհորդներին թույլ կտա նաև տեսնել իրենց կացության թույլատրված տևողությունը:

Հայաստանում Շենգենյան համագործակցության անդամ երկրների բոլոր հյուպատոսությունները 2015 թվականի հունիսի 23-ից միացվել են Վիզաների տեղեկատվական համակարգին (ՎՏՀ, անգլ.՝ VIS): «VIS» համակարգը ստեղծվել է վիզային գործընթացների պարզեցման և վիզայի դիմելու գործընթացի անվտանգության բարձրացման համար: Այն իրենից ներկայացնում է գոնե մեկ անգամ վիզայի համար դիմած անձանց կենսաչափական տեղեկությունների միասնական կենտրոնացված բազա: Շենգենյան վիզայի համար դիմողներից կպահանջվի տրամադրել իրենց կենսաչափական տվյալները (մատնահետքեր և թվային լուսանկար): Կենսաչափական տվյալները, ինչպես նաև Շենգենյան վիզայի դիմումի մեջ ներառված տեղեկատվությունը կգրանցվի ՎՏՀ տվյալների կենտրոնական

51 Smart Borders: EU Entry/Exit System: http://www.europarl.europa.eu/RegData/etudes/BRIE/2016/586614/EPRS_BRI(2016)586614_EN.pdf

շտեմարանում: Կենսաչափական տեխնոլոգիաների օգնությամբ վիզայի համար դիմողներն ավելի լավ պաշտպանված կլինեն անձնական տվյալների գողությունից:[52]

Շենգենյան վիզայի դիմումներն Հայաստանում. վիճակագրական տվյալները և վերլուծությունը

Շենգենյան պետություններն ընդհանուր թվով ավելի քան 16 միլիոն դիմում են ստացել 2018 թվականին:[53] 2012 թվականից ի վեր աստիճանաբար աճել է շենգենյան վիզա ստանալու համար Հայաստանի քաղաքացիների ներկայացրած դիմումների թիվը:

Գծապատկեր 1. Հայաստանում գործող հյուպատոսություններին ներկայացված՝ միասնական վիզաների դիմումների թիվը, 2012–2018 թթ.



	France	Germany	Greece	Italy	Lithuania	Poland	Czhech Republic
2012	5601	12934	3665	10514	4372	1810	
2013	5235	14900	4559	11200	7419	2045	
2014	5901	13974	6763	9621	11232	4530	
2015	6190	13717	11049	8341	11176	4164	3150
2016	5454	14515	11883	11391	8821	4304	4697
2017	5963	14942	15183	11662	10152	4523	3746
2018	6591	15739	13535	8731	7712	3537	3167

Գծապատկեր 1-ում ներկայացված են Հայաստանում հյուպատոսություն ունեցող պետությունները և վիզաների դիմումների ընդհանուր թիվը 2012–2018 թվականներին: Հարկ է նշել, որ դրական միտում կա Հայաստանում

52 Սատնահետքեր և թվային լուսանկար՝ շենգենյան վիզայի համար, http://eunewsletter.am/hy/%D5%B4%D5%A1%D5%BF%D5%B6%D5%A1%D5%B0%D5%A5%D5%BF%D6%84%D5%A5%D6%80-%D6%87-%D5%A9%D5%BE%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%AC%D5%B8%D6%82%D5%BD%D5%A1%D5%B6%D5%AF%D5%A1%D6%80%D5%9D-%D5%B7%D5%A5%D5%B6%D5%A3/

53 Statistics Reveal Schengen consulates received Over 16 Million Applications in 2018: https://www.schengenvisainfo.com/news/statistics-reveal-schengen-consulates-received-over-16-million-applications-in-2018/

հավատարմագրված հյուպատոսարաններում, քանի որ նրանցից մի քանիսը վիզաներ են տալիս շենգենյան այլ պետությունների անունից: Երևանում Գերմանիայի դեսպանությունը վիզաներ է տալիս նաև Ավստրիայի, Բելգիայի, Լյուքսեմբուրգի, Նիդեռլանդների և Շվեդիայի անունից (ինչպես վերը նշեցինք՝ 2020թ. հունվարի 1-ից Ավստրիան դիմումների ընդունումը պատվիրակել է «VFS Global» ընկերությանը): Լեհաստանի դեսպանությունը վիզաներ է տալիս նաև Սլովենիայի, Սլովակիայի և Շվեյցարիայի անունից: Լիտվայի դեսպանությունը վիզաներ է տալիս նաև Լատվիայի, Էստոնիայի, Դանիայի, Իսպանիայի և Հունգարիայի անունից: Իտալիայի դեսպանությունը վիզաներ է տալիս նաև Մալթայի և Ֆինլանդիայի անունից: Ֆրանսիայի դեսպանությունը վիզաներ է տալիս նաև Նորվեգիայի անունից: Գծապատկերը ցույց է տալիս նաև, որ դիմումների թիվը շարունակել է զգալիորեն աճել գրեթե բոլոր հյուպատոսարաններում: Ամենամեծ աճն արձանագրվել է Հունաստանի հյուպատոսարանում (3,665-ից հասնելով 12,535-ի), Լեհաստանի հյուպատոսարանում (1,810-ից հասնելով 3,537-ի) և Լիտվայի հյուպատոսարանում (4,372-ից հասնելով 7,712-ի):[54]

Գծապատկեր 2-ում ներկայացված է շենգենյան «C» վիզաների դիմումների և մերժումների թիվն Հայաստանում:[55] Համեմատելով վիզաների ընդհանուր թիվը 2012-2018 թվականներին՝ պարզ է դառնում, որ վիզայի դիմումների ընդհանուր թիվն ավելացել է ամեն տարի՝ սկսած 2012 թվականից (38,896-ից 2018 թվականին հասնելով 59,012-ի): Հաշվի առնելով միևնույն ժամանակաշրջանում բազմակի մուտքի իրավունքով վիզաների թվի աճը՝ ակնհայտ է դառնում, որ շենգենյան գոտի այցելող Հայաստանի քաղաքացիների թիվը զգալիորեն ավելացել է: Կանաչ գիծը Գծապատկեր 2-ում ցույց է տալիս վիզաների չտրամադրման ցուցանիշը.[56] մերժման ցուցանիշը 2013-2018 թվականներին հիմնականում տատանվել է 10%-ից մինչև 12.8%-ի միջակայքում:

54 Չեխիայի հյուպատոսությունն սկսել է գործել Հայաստանում 2015 թվականին: Ուստի, բոլոր թվերը վերաբերում են միայն 2015-2018 թվականներին:

55 Թվերը վերցված են ԵՄ պաշտոնական վիճակագրական տվյալներից. https://ec.europa.eu/home-affairs/what-we-do/policies/borders-and-visas/visa-policy_en

56 Հարկ է հաշվի առնել, որ Հայաստանում չտրամադրելն հավասարազոր է պաշտոնական մերժման: Վիզայի դիմումը չբավարարելու դեպքում լայն տարածում է գտել անձնագրում մերժման պաշտոնական կնիք չդնելու պրակտիկան: Փոխարենը՝ վիզա չի տրամադրվում, և փաստաթղթերը վերադարձվում են դիմողին:

Գծապատկեր 2. Վիզաների դիմումների և մերժումների թիվն Հայաստանում



	2012	2013	2014	2015	2016	2017	2018
C Visas Applied for	38896	45358	52021	57787	61065	66171	59012
C Visas Not Issued	3105	5220	5259	7105	6695	8473	6939
Not Issuance Rate	8.50%	11.51%	10.10%	12.30%	10.90%	12.80%	11.80%

Վերջին երեք տարիներին մի փոքր աճել է մերժումների ցուցանիշը: Մերժումների դեպքերն հիմնականում կապված են վիզայի դիմումի մեջ բացակայող փաստաթղթերի, ինչպես նաև ճանապարհորդելու նպատակի արժանահավատ ապացույցների բացակայության հետ: Դիմողներն հաճախ չեն ներկայացնում կացարանն հաստատող փաստաթղթեր կամ դիմողի հաշվին բավարար գումարի առկայությունն հաստատող բանկային փաստաթղթեր: Մերժումներից շատերի պատճառն այն է, որ դիմողը չի կարողանում ապացուցել նախքան վիզայի ժամկետը լրանալն Հայաստան վերադառնալու մտադրությունը:

Արևելյան գործընկերության որոշ պետությունների ընձեռված վիզայազերծ ռեժիմը. Վրաստանի փորձից քաղված դասերը

Արևելյան գործընկերության 6 պետություններից 3-ին արդեն իսկ ընձեռվել է վիզայազերծ ռեժիմ: Մոլդովան հետխորհրդային պետություններից առաջինն էր, որին 2014 ապրիլին ընձեռվեց վիզայազերծ ռեժիմ ԵՄ կողմից: Նրան հաջորդեցին Վրաստանը 2017 թվականի մարտին[57] և Ուկ-

57 Վրաստանի համար ԵՄ երկրներ կարճաժամկետ այցերի համար վիզային սահմանափակումը չեղարկելու մասին որոշմանը զուգահեռ, ԵՄ-ն Վրաստանի կողմից խախտումների դեպքում կամ ստանձնած պարտավորություններից հետ կանգնելու դեպքում իրավունք է վերապահում դադարեցնել առանց վիզայի ռեժիմի գործողությունը և այդ նպատակով Եվրոպական հանձնաժողովը պետք է իրականացնի մոնիտորինգ: (http://www.europarl.europa.eu/news/en/news-room/20170131IPR60306/georgia-visa-waiver-approved-by-parliament)

րաինան 2017 թվականի հունիսին:[58] Եվրոպա ուղևորության համար վիզաների չեղարկումից (2017թ. մարտի 28) հետո 14 ամսվա ընթացքում Վրաստանի ավելի քան 255,400 հազար քաղաքացի է եղել շենգենյան գոտու երկրներում:[59] 2018 թվականի հունիսի դրությամբ Ուկրաինայի ավելի քան մեկ միլիոն քաղաքացի է ճանապարհորդել շենգենյան գոտու երկրներ առանց վիզայի՝ 2017 թվականից ի վեր:

Այդ պետություններին ընձեռված վիզայազերծ ռեժիմն ուղեկցվում է որոշակի սահմանափակումներով և պահանջներով. քաղաքացին պետք է կենսաչափական անձնագիր ունենա, պատասխանի ուղևորության նպատակի մասին սահմանապահի հարցին, ապացուցի վերադարձի տոմսի և հյուրանոցի ամրագրման առկայությունը և բավարար դրամական միջոցների առկայությունն ուղևորության յուրաքանչյուր օրվա համար (տարբեր պետությունների դեպքում այդ գումարը տարբեր է):

Վիզայազերծ ռեժիմի առավելություններից զատ, ինչպիսիք են ժողովուրդների միջև շփումների ավելացումը և տեղաշարժվելու ազատությունը, գոյություն ունեն նաև անկանոն միգրացիայի որոշակի ռիսկեր (թույլատրված ժամկետից ավելի երկար մնալու ռիսկը): Ուստի, ԵՄ-ն որոշակի մեխանիզմ ունի վիզայազերծ ռեժիմի չարաշահման դեպքերի համար: 2013 թվականին ԵՄ խորհուրդը վիզայազերծ ռեժիմի կասեցման մեխանիզմ է ներդրել (կանոնակարգ թիվ 1289/2013), որով նախատեսվում է Անդամ պետությունների կողմից խնդիրների մասին բարձրաձայնելու և վիզայազերծ ռեժիմի կասեցում պահանջելու ընթացակարգ: Կանոնակարգի մեջ փոփոխություններ են արվել 2018 թվականին: Կասեցումն հնարավոր է ապաստանի անհիմն դիմումների թվի, անօրինական մնացող անձանց թվի, մուտքի մերժումների թվի հանկարծակի և էական աճի դեպքում, հետընդունման ուղղությամբ համագործակցության անբավարարության կամ Անդամ պետությունների ներքին անվտանգությանը կամ հանրային քաղաքականությանը սպառնացող ավելի մեծ վտանգի կամ վրահաս սպառնալիքի դեպքում, մասնավորապես՝ երբ զգալիորեն ավելանում է ծանր քրեական հանցագործությունների ռիսկը (տե՛ս Կանոնակարգ թիվ 2018/1806, կետ 22):[60] Եվրոպական հանձնաժողովն իրավունք ունի վիզայազերծ ռեժիմը կասեցնել ժամանակավորապես (ինը ամիս ժամկետով) քաղաքացիների որոշակի խմբերի համար: Անդամ պետությունների

58 Visa Liberalization with Moldova, Ukraine and Georgia: https://ec.europa.eu/home-affairs/what-we-do/policies/international-affairs/eastern-partnership/visa-liberalisation-moldova-ukraine-and-georgia_en

59 Վրաստանի քաղաքացիներն առանց վիզայի Եվրոպա են մեկնել գրեթե 358 հազար անգամ, https://news.am/arm/news/464103.html

60 Regulation No 2018/1806: https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX-:32018R1806&from=EN

որակյալ մեծամասնությամբ համաձայնությամբ այդ ժամկետը կարող է երկարացվել: Կասեցման ժամկետի ընթացքում Հանձնաժողովը և տվյալ պետությունը պետք է խնդրի լուծում փնտրեն:

Վրաստանին, Մոլդովային և Ուկրաինային վիզայազերծ ռեժիմ ընձեռելուց հետո թե՛ այդ պետությունները, թե՛ ԵՄ-ն ուշի-ուշով հետևում են այդ պետություններից ԵՄ և ԵՄ-ից այդ պետություններ ուղևորությունների վիճակագրական տվյալներին, ինչպես նաև՝ ապաստանի անհիմն դիմումների թվի աճին:

Գծապատկեր 3. Վրաստանի քաղաքացիների կողմից առաջին անգամ ներկայացված ապաստանի դիմումների թիվը և ԵՄ Անդամ պետությունների և Նորվեգիայի, Շվեյցարիայի, Իսլանդիայի և Լիխտենշտեյնի կայացրած դրական որոշումների ընդհանուր թիվը[61]



Ինչպես ներկայացված է Գծապատկեր 3-ում, Վրաստանի պարագայում վիզայազերծ ռեժիմի ներդրումից անմիջապես հետո ավելացել է ապաստանի դիմումների թիվը: 2016 թվականի համեմատությամբ՝ 2017 թվականին, երբ Վրաստանին ընձեռվեց վիզայազերծ ռեժիմ, թիվն աճեց՝ 7,740-ից հասնելով 10,930-ի: 2018 թվականին ապաստանի դիմումների թիվը գրեթե կրկնապատկվեց՝ հասնելով 18,965-ի:

Հայաստանին վիզայազերծ ռեժիմ ընձեռելու պարագայում նույնպես կարող է մեծ լինել անօրինական միգրացիայի ցուցանիշի ավելացման հավանականությունը: Վիզայազերծ ռեժիմ ստացած պետությունների,

61 Տվյալները վերցված են Եվրոպական միության պաշտոնական վիճակագրական ծառայությունից՝ Եվրոստատից.
http://appsso.eurostat.ec.europa.eu/nui/show.do?dataset=migr_asyappctza&lang=en

մասնավորապես՝ Վրաստանի տվյալների և առաջին տարիների պրակտիկ փորձի ուսումնասիրությունը և վերլուծությունը կարևոր են Հայաստանի համար, քանի որ Հայաստանը դեռ մուտք չի գործել այդ փուլ, և պատճառների մանրակրկիտ ուսումնասիրությունը և ճիշտ եզրակացությունների հանգելը կարող է օգնել, որպեսզի Հայաստանն ավելի լավ պատրաստվի այդ փուլին: Այդ պարագայում Հայաստանը կկարողանա ավելի կարճ ժամկետում կատարել այն քայլերը, որոնք անհրաժեշտ են եվրոպական կողմի պահանջներին համապատասխանելու համար:

Մաս 3. Վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին համաձայնագրի պահանջների կատարումը. կենսաչափական անձնագրերի ներդրումը

Վիզաների դյուրացման գործընթացի շրջանակում Հայաստանում ներդրվել են կենսաչափական անձնագրեր: 2012 թվականի հուլիսից երկիրը պաշտոնապես ներդրել է անձը հաստատող երկու նոր փաստաթղթերը, որոնք փոխարինել են Հայաստանի քաղաքացու սովորական անձնագիրը: Դրանցից առաջինը նույնականացման քարտն է՝ էլեկտրոնային ստորագրությամբ հանդերձ, որը կարող է օգտագործվել երկրի ներսում, ինչպես նաև կենսաչափական անձնագիրը՝ էլեկտրոնային չիփով, որը կարող է օգտագործվել արտերկիր ուղևորվելիս: Կենսաչափական անձնագիրը պարունակում է կենսաչափական տվյալներ (անձնագրի տիրոչ լուսանկարը և մատնահետքը), ուստի՝ այդ անձնագրի պարագայում շատ ավելի հեշտ է սահմանային անցակետին պարզել անձի ինքնությունը: Կենսաչափական անձնագրի արժեքը 25,000 դրամ (մոտ 50 եվրո) է, իսկ կենսաչափական անձնագրի և նույնականացման քարտի արժեքը միասին վերցված՝ 28,000 դրամ (մոտ 53 եվրո): Կենսաչափական անձնագիրը և նույնականացման քարտն համապատասխանում են Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության («ICAO») չափանիշներին:

Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ նոր անձնագրերի տրամադրումը պարտադիր չէ, և Հայաստանի քաղաքացիները կարող են շարունակել ճանապարհորդել իրենց հին անձնագրերով: Հայաստանի կառավարությունը մի քանի անգամ հետաձգել է այդ գործընթացը: ՀՀ Ազգային ժողովի որոշմամբ՝ կենսաչափական անձնագիր պետք է տրամադրվեր 2014 թվականի հունվարից հետո նոր անձնագիր ստացող քաղաքացիներին: 2014 հունվարից սկսած՝ քաղաքացիները կարող են ստանալ միայն կենսաչափական տվյալներ պարունակող անձնագիր: Այնուամենայնիվ, անցումը բացառապես կենսաչափական անձնագրերին և նույնականացման քարտերին դանդաղել է:

2016 թվականի օգոստոսին ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության պետ Մնացական Բիչախչյանն հարցազրույցի ընթացքում պարզաբանեց, որ Հայաստանում օրինական են թե՛ հին նմուշի, թե՛ կենսաչափական անձնագրերը: Հայաստանում կիրառվում են ոչ միայն կենսաչափական անձնագրեր, քանի որ որոշ անձինք կրոնական համոզմունքների հիման վրա չէին ցանկանում մատնահետք տալ կենսաչափական անձնագրի համար: Մարդու իրավունքների այս խնդրի առաջացումից հետո Հայաստանում թույլատրվեց մինչև 2019 թվականի հունվարի 1-ն ունենալ հին նմուշի անձնագիր (որը նախատեսվել է 1998 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշմամբ):[62] Համանման քննարկում վերսկսվեց 2018 թվականի օգոստոսին, երբ Արդարադատության նախարարությունը հանրային քննարկման ներկայացրեց «Նույնականացման քարտերի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերը: Այնուհանդերձ, դեռևս վերջնական որոշում չի կայացվել, և անձնագրերի երկու տեսակները շարունակում են գործել՝ Հայաստանի քաղաքացիներին հնարավորություն ընձեռելով ընտրել, թե որ անձնագիրն են նրանք ցանկանում ստանալ: Հետաձգումը բացատրվում է կենսաչափական անձնագրերի և նույնականացման քարտերի սպասարկումն իրականացնող ընկերություն ընտրելու համար հայտարարված նոր մրցույթով:[63]

Կենսաչափական անձնագրերի հետ կապված խնդիրների պատճառով ՀՀ Արտաքին գործերի նախարարի տեղակալ Ավետ Ադոնցը 2019թ. նոյեմբերի 19-ին Ազգային Ժողովում ելույթի ժամանակ հայտարարեց[64]. «Տեխնիկական խնդիրներ կան: Մասնավորապես՝ բիոմետրիկ անձնագրեր ունենք, բայց դրանց ձևակերպումն այս պահին տեխնիկական ինչ-ինչ պատճառներով փոքր-ինչ խնդրահարույց է: Բայց մինչև տարեվերջ մեր հյուպատոսական ծառայությունը մտադիր է կարգավորել այդ խնդիրը՝ թե՛ բիոմետրիկ, թե՛ դիվանագիտական անձնագրերի որակը բարձրացնելու առումով» և ավելացրեց. «Նշած տեխնիկական խնդիրների ուսումնասիրությունն արդեն 2020թ-ին կիանգեցնի նոր անձնագրերի տպագրության»:

Կարևոր է նշել, որ Վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին համաձայնագրում չկան դրույթներ կենսաչափական անձնագրերի մասին, ուստի՝ վիզաների դյուրացումից օգտվելու համար պարտադիր նախա-

62 Հայկական ժամանակ: Կենսաչափական անձնագիրն այլևս պարտադիր չէ, քաղաքացիներին կտրամադրվի հին նմուշի անձնագիր, 03.08.2016թ., https://www.armtimes.com/hy/article/90836

63 IravabanNet: Հին նմուշի անձնագրեր կտրամադրվեն մինչև 2021 թվականի հունվարի 1-ը, 24.08.2018թ., https://iravaban.net/199667.html

64 https://armeniasputnik.am/society/20191119/21143638/Hayastani-andznagrery-texnikakan-xndirner-unen-2020-in-norery-ktpagrven.html

պայման չէ կենսաչափական անձնագիր ունենալը: Այնուամենայնիվ, վիզաների ազատականացման համար պարտադիր է լինելու կենսաչափական անձնագրերի տրամադրումը:

Կենսաչափական անձնագրերի տրամադրման, ինչպես նաև վիզաների դյուրացման և ազատականացման գործընթացում Հայաստանի համար կարևոր խնդիր է նաև տվյալների պաշտպանությունը: Այնուամենայնիվ, որոշակի խնդիրներ կան Հայաստանի օրենսդրության և պրակտիկայի մեջ: «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության 2015 թվականի օրենքում դեռևս անհրաժեշտ են բարեփոխումներ: Օրենքը թույլ է տալիս առանց տվյալ անձի համաձայնության նրա անձնական տվյալները փոխանցել երրորդ անձանց կամ թույլատրել տվյալների հասանելիությունը (հոդված 26):

Օրինակ, անձնական տվյալները կարող են փոխանցվել առանց անձի համաձայնության, եթե դա նախատեսված է օրենքով կամ միջպետական պայմանագրով: ՀՀ սահմանապահ ծառայությունը տնօրինում է անձնական տվյալների ամենամեծ քանակությունը: Միևնույն ժամանակ, ՀՀ սահմանապահ ծառայությունն հասանելի է Ռուսաստանի անվտանգության դաշնային ծառայության սահմանապահ դեպարտամենտին: Դա նշանակում է, որ Ռուսաստանի Դաշնությունը կարող է տեսնել Հայաստանի պետական սահմանի հատման բոլոր դեպքերը, ճանապարհորդության ուղղությունը և անձը հաստատող փաստաթղթի տվյալները:[65]

Ավելին, անձնական տվյալների պաշտպանությամբ զբաղվող գործակալությունն անկախ չէ. այն կոչվում է ՀՀ արդարադատության նախարարության Անձնական տվյալների պաշտպանության գործակալություն, և պետական հիմնարկ է: Գործակալության կանոնադրության համաձայն՝ կառույցի հիմնական նպատակներից է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կատարումը:[66] Այնուհանդերձ, ինչպես նշվեց վերևում, օրենքով որոշակի սահմանափակումներ են նախատեսվում, և հնարավոր է տվյալների փոխանցումն այլ պետությունների: Բացի դրանից, գործակալության՝ պետական հիմնարկ լինելը տվյալների պաշտպանության լրացուցիչ խնդիրներ է առաջացնում Հայաստանում:

65 Բաց հասարակության հիմնադրամներ–Հայաստան, զեկույց (առանց ամսաթվի), «Անձնական տվյալների պաշտպանությունը Հայաստանում և Վրաստանում», http://www.osf.am/ wp–content/uploads/2017/01/Article–5–RT–Personal–data_eng.pdf, retrieved on 27 July 2018.

66 Արդարադատության նախարարության Անձնական տվյալների պաշտպանության գործակալության կանոնադրությունը, http://www.justice.am/en/structures/view/structure/32

Մաս 4. Եզրակացություններ և առաջարկություններ

Հայաստանը ԵՄ-ի հետ ստորագրել է Վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին և Հետընդունման համաձայնագրերը, որոնք կարևոր քայլեր են ԵՄ վիզայազերծ ռեժիմը ստանալու համար: Վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին համաձայնագրով մի շարք առավելություններ են նախատեսվել Հայաստանի քաղաքացիների համար, մասնավորապես՝ վիզայի ավելի ցածր վճարը և վիզայի տրամադրման ավելի արագ ընթացակարգը:

Միևնույն ժամանակ, որոշակի թերություններ և խնդիրներ կան, որոնք անհրաժեշտ է լուծել վիզայի դիմումների մերժումների թիվը կրճատելու և վիզաների ազատականացման երկխոսությունը մեկնարկելու համար: Օրինակ, անցումը բացառապես կենսաչափական անձնագրերին հետաձգվել է Հայաստանի կողմից: Կենսաչափական անձնագրերը, սակայն, անհրաժեշտ նախապայման են վիզայազերծ ռեժիմ ստանալու համար:

Հայաստանի Հանրապետության կառավարությանը

- Վիզաների ազատականացման երկխոսության մեկնարկն արագացնելու համար Հայաստանի իշխանությունները պետք է պատրաստակամություն ցուցաբերեն՝ ընդունելու խտրականության դեմ պայքարի մասին օրենքը և վավերացնելու Ստամբուլյան կոնվենցիան: Նշենք, որ խտրականության դեմ օրենքը անհրաժեշտ է ընդունել, քանի որ դա կարևոր պայման է:
- Որոշակի ընթացակարգեր է պետք մշակել կենսաչափական տվյալների մշակման, պահպանման, տրամադրման և օգտագործման համար: Կենսաչափական տվյալներն այլ պետություններին տրամադրելու հիմքերը և կարգը պետք է նույնպես հստակորեն սահմանել:
- «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի օրենքում պետք է լրացում կատարել՝ ապահովելու համար Անձնական տվյալների պաշտպանության գործակալության անկախությունը պետական մարմիններից, սահմանելու համար գործակալության իրավունքները և պարտավորությունները, և բավարար ֆինանսավորում տրամադրելու համար գործակալությանը:
- Անձնական տվյալների պաշտպանության գործակալության արդյունավետ աշխատանքն ապահովելու համար անհրաժեշտ է գործակալությունն համալրել բավարար փորձ և գիտելիք ունեցող մարդկային ռեսուրսներով, մասնագիտական սարքավորումներով

և մեթոդաբանությամբ: Պետք է ապահովվի Ազգային ժողովին ներկայացվող և հրապարակվող տարեկան զեկույցի տեսքով հանրությանն հաշվետվություն ներկայացնելու պրակտիկա:

- Օրենքին համապատասխան և ողջամիտ ժամկետում միջոցներ ձեռնարկել կենսաչափական փաստաթղթերը մատակարարողի ընտրության մրցույթն անցկացնելու համար՝ ապահովելով նոր պայմանագրի կնքման գործընթացի հաշվետվողականությունը և թափանցիկությունը: Այս և համանման մրցույթներին մասնակցելու հնարավորություն ընձեռել հայաստանյան ընկերություններին:

Եվրոպական միությանը (ՀՀ-ում ԵՄ անդամ երկրների հյուպատոսական ծառայություններ և գործող վիզա կենտրոններ)

- Դրական վիզային պատմություն ունեցողները իրավունք ունենան օգտվել դյուրացված կանոններից, նույնիսկ եթե չեն պատկանում համաձայնագրով նախատեսված ավելի հեշտ վիզայի ստանալու իրավունք ունեցող կատեգորիաներին:
- ԵՄ-ին և ՀՀ-ում ԵՄ երկրների հյուպատոսական ծառայություններին առաջարկում ենք հատկապես ուշադրություն դարձնել մերժումների դեպքում բողոքարկման գործընթացներին՝ ապահովելով որոշման վերանայման ավելի թափանցիկ, մատչելի և պարզեցված գործընթաց, ինչը հնարավոր կդարձնի բողոքարկողներին ստանալ պատասխան խելամիտ ժամկետներում: Բողոքարկման արդյունքում փոխված որոշման քանակի մասին չկան տվյալներ, ինչը թույլ կտար անել եզրակացություններ բողոքարկման գործընթացների արդյունավետության մասին: Անհրաժեշտ է ներդնել բողոքարկման այլընտրանքային եղանակներ, որոնք իրական հնարավորություն կտան դիմորդների իրավունքների իրացման համար:
- ԵՄ անդամ պետություններին պետք է քաջալերել, որպեսզի վիզաների կենտրոններ բացեն Հայաստանի այլ քաղաքներում ևս (Գյումրի, Վանաձոր և Կապան), որպեսզի հատկապես հեռավոր քաղաքների բնակիչները կարողանան վիզայի ընթացակարգից օգտվել ավելի հարմար եղանակով:
- Հյուպատոսարաններում և վիզաների կենտրոններում վիզայի վճար գանձելու կամ չգանձելու որոշումն անհրաժեշտ է հստակեցնել: Վիզայի վճարից ազատելու մասին դրույթն հաճախ խախտվում է հյուպատոսարանի պաշտոնատար անձանց և վիզաների կենտրոնների աշխատողների կողմից (ուղևորության միևնույն նպատակի

դեպքում վիզայի վճար երբեմն գանձվում է, երբեմն՝ ոչ): Թերևս լավ կլինի, օրինակ, եթե դիմումի ձևը լրացնելուց հետո պատասխան տրվի վիզայի վճար կատարելու անհրաժեշտության մասին:

- Անդամ պետություններին թույլ տալ, որպեսզի սահմանին մինչև 15 օր ժամկետով և միայն տրամադրող պետության տարածքում գործող մուտքի վիզա տրամադրելու հատուկ ընթացակարգ սահմանեն և կիրառեն:
- Հայաստանի քաղաքացիական հասարակության ակտիվ կազմակերպություններին ներգրավել վիզաների և միգրացիայի գործընթացներին, մասնավորապես՝ այդ ոլորտներում Հայաստանի իշխանությունների կողմից կատարվող բարեփոխումների մոնիթորինգի և գնահատման գործընթացներում: Օրինակ, երբ Հայաստանի իշխանությունները քննարկումներ կամ լսումներ են կազմակերպում վիզաների դյուրացման և ազատականացման մասին, անհրաժեշտ է հրավիրել քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին: Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներգրավումը ՀՀ–ԵՄ բանակցություններին և պաշտոնական գործընթացին ընդգծված է նաև ՀԸԳՀ–ում:
- Հյուպատոսությունները պետք է խուսափեն մեկանգամյա կամ 1–6 ամիս վավերականության վիզաներ տրամադրել Շենգենի վիզայի դրական պատմություն ունեցող դիմորդներին: 1 տարի և ավելի ժամկետով վիզաները պետք է դառնան սովորական երևույթ, այլ ոչ թե բացառություն: Երկար վավերականության ժամկետով վիզա (հատկապես՝ 2–5 տարվա), թեև արդեն սկսել են տրամադրել, սակայն դեռևս շատ հազվադեպ, մինչդեռ դա կարող էր մեծապես հեշտացնել ԵՄ հաճախ ճանապարհորդողների կյանքը, ինչպես նաև նվազեցնել հյուպատոսությունների ու վիզա կենտրոնների ծանրաբեռնվածությունը: Առաջարկում ենք, որպեսզի ամեն հաջորդ վիզան չլինի առնվազն ավելի կարճ ժամկետով, քան նախորդը: Առավել ևս, որ այդ հնարավորությունը տալիս է 2020թ. փետրվարին ԵՄ վիզայի Օրենսգրքում («EU Visa Code») կատարված փոփոխությունները, ինչի մասին մանրամասն ասվեց վերևում:
- Հյուպատոսական ծառայությունները պետք է դիմորդներին տեղեկացնեն երկարաժամկետ վիզայի դիմելու իրենց իրավունքի մասին, եթե վերջիններս համապատասխանում են չափանիշներին:
- Վիզա կենտրոններին առաջարկում ենք բարելավել իրենց տեխնիկական աշխատակիցների ընտրության և վերապատրաստման հարցը, այդ թվում դիմորդների հետ վարվելակերպի և սպասարկման հարցերում, քանի որ բացի մասնագիտական գիտելիքներից

և հմտություններից, կան նաև փաստաթղթերի անվտանգության, պահպանման, տեղափոխման, վերադարձման հետ կապված հարցեր:

Հայաստանի քաղաքացիներին և պետական մարմիններին

- Վիզայի համար դիմող քաղաքացիներին կոչ է արվում ավելի ջանասիրաբար կազմել և հավաքել վիզայի համար պահանջվող փաստաթղթերը, ձեռնպահ մնալ կեղծ տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելուց և վիզա ստանալուց հետո փաստաթղթերի հիմնավորումը (օրինակ՝ ուղևորության երկիրը) փոխելուց, քանի որ նման դեպքերում կարող է չեղարկվել վիզան, կամ՝ սահմանի վրա կարող է արգելվել մուտքը:
- Խորհուրդ ենք տալիս այս ոլորտում հանրության իրազեկության բարձրացման տարբեր միջոցառումներ իրականացնել՝ ներառյալ նյութերի հրապարակումը և տարածումը: Այս առաջարկությունը վերաբերում է հատկապես վիզաների և միգրացիայի ոլորտում ակտիվորեն գործող հասարակական կազմակերպություններին:
- ՀՀ-ի պետական մարմիններին առաջարկում ենք շարունակել կազմակերպել իրենց աշխատակիցների համար սեմինարներ, փորձի փոխանակման այցեր, վերապատրաստման ծրագրեր և այլն:

Ուսրիկանության անձնագրերի և վիզաների վարչությանը

- Ապահովել կենսաչափական անձնագրեր տրամադրելու անխափան գործընթացը: Ապահովել մրցութային հրավերների, մրցույթների և նոր պայմանագրերի կնքման գործընթացների հաշվետվողականությունը և թափանցիկությունը:
- Կենսաչափական անձնագրի վճարը պետք է նվազեցնել, որպեսզի այն մատչելի դառնա ողջ բնակչության համար: Կենսաչափական անձնագիրն արժե 25,000 դրամ (մոտ 50 եվրո) է, որը բավական բարձր գին է Հայաստանի պարագայում, որտեղ միջին աշխատավարձը մոտ 250 եվրո է:
- Ապահովել անձնագրերի նմուշների պարբերական փոխանակումը ԵՄ-ի հետ և համագործակցել փաստաթղթերի անվտանգության հարցում:

Գլուխ երկրորդ
ՀՀ–ԵՄ հետընդունման (ռեադմիսիայի) համաձայնագրի կիրարկման մշտադիտարկում

Սույն զեկույցի նպատակն է 2019 թվականի ընթացքում ՀՀ–ԵՄ առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) համաձայնագրի՝ Հայաստանի կողմից իրականացվող պարտավորությունների կատարման և դրանց արդյունավետության ուսումնասիրությունը, Հայաստան վերադարձող ՀՀ քաղաքացիների վերաինտեգրման հիմնախնդիրների հետազոտության իրականացումը, ինչպես նաև այդ ոլորտում քաղաքականության վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը՝ գործընթացի բարելավման նպատակով:

Զեկույցի նախապատրաստման համար օգտագործվել է հետևյալ մեթոդաբանությունը.

- Ուսումնասիրվել են վերադարձի, ռեադմիսիայի և վերաինտեգրման ոլորտում Հայաստանի միգրացիոն քաղաքականությանն առնչվող փաստաթղթերը, ՀՀ Կառավարության ծրագիրը, ինչպես նաև՝ ՀՀ–ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը (ՀԸԳՀ) և այլ փաստաթղթեր:
- Ուսումնասիրվել է իրենց քաղաքացիների վերադարձի աջակցության ուղղությամբ իրականացվող/կիրառվող միջազգային փորձը: Ուսումնասիրվել են վերադարձողների իրավունքների և նրանց վերաինտեգրման հիմնախնդիրների բացահայտման վերաբերյալ իրականացված հետազոտություններ: Հավաքագրվել են ռեադմիսիայի, ապաստանի և վերաինտեգրման վերաբերյալ վիճակագրական տվյալները:
- Փորձագիտական հարցումներ են անցկացվել, ինչպես նաև կազմվել են հարցեր՝ ուղղված ոլորտի պատասխանատու պետական մարմիններին, մասնավորապես՝ ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (ՏԿԵՆ) Միգրացիոն ծառայություն, վերաինտեգրման «մեկ պատուհան» ծառայություն և այլն:

Մաս 1. Հայաստանի Հանրապետություն վերադարձի միտումները

Վերադարձի հոսքերի ինտենսիվությունն առավել ակտիվացավ հատկապես վերջին տարիներին Եվրամիության երկրներում խստացված

միգրացիոն քաղաքականության հետևանքով՝ պայմանավորված նաև 2015թ–ի Եվրոպայի միգրացիոն ճգնաժամով: Այսօր Եվրոպական Միությունից միգրանտների վերադարձը իրենց ծագման երկրներ ԵՄ միգրացիոն քաղաքականության օրակարգի առաջնահերթություններից է, և Եվրոպայում վերջին տարիների միգրացիոն զարգացումները ցույց են տալիս, որ վերադարձի վրա կենտրոնացումը հետագա տարիներին ևս չի նվազելու, այլ հակառակը՝ ավելանալու է: Միևնույն ժամանակ, Հայաստանն այլևս դասվում է «ապահով երկրների» շարքին[67], ուստի Հայաստանի միգրանտներից ստացվող ապաստանի հայցի դիմումների գերակշռող մասը մերժվում է:

Այսպես, 2010–2018թթ. ՀՀ քաղաքացիների կողմից ԵՄ և ԵԱԱԸ (ԵԱԱԸ–Եվրոպական ազատ առևտրի ընկերակցությունը կազմված է 4 երկրներից՝ Իսլանդիա, Լիխտեյնշտեյն, Նորվեգիա և Շվեյցարիա) անդամ պետություններում ներկայացվել է 57,250 ապաստանի հայց: Ընդհանուր առմամբ, 2010–2018թթ. վերջնական որոշումների հիման վրա ՀՀ քաղաքացիներին շնորհվել է 1,080 փախստականի կարգավիճակ, 1,015 հումանիտար պաշտպանության կարգավիճակ և 880 օժանդակ պաշտպանության կարգավիճակ: Այս ժամանակահատվածի 4 հիմնական նպատակակետ երկրներն են Գերմանիան, Ֆրանսիան, Ավստրիան և Բելգիան, որոնք միասին տարեկան ընդունել են ՀՀ քաղաքացի ապաստան հայցողների մոտ 88%–ին[68]:

2019թ. ԵՄ(28) և ԵԱԱԸ(4) անդամ պետություններում ապաստան է հայցել 4,360 ՀՀ քաղաքացի, որոնցից 3,525–ը՝ առաջին անգամ: 2019թ. ցուցանիշը գրանցել է նվազում ոչ միայն նախորդ տարվա համեմատ, այլ նաև ամենացածրն է վերջին 10 տարիների համար: ՀՀ քաղաքացի ապաստան հայցողների հիմնական նշանակետ երկրները եղել են Ֆրանսիան, Գերմանիան և Չեխիան[69]:

Վերոնշյալ վիճակագրությունը փաստում է, որ վերջին տարիներին ԵՄ անդամ երկրներում անկանոն կարգավիճակում գտնվող ՀՀ քաղաքացիների թվաքանակը զգալիորեն ավելացել է և անկանոն կարգավիճակում գտնվող ՀՀ քաղաքացիների կուտակումներ են առաջացել, նրանց վերաբերյալ նաև ԵՄ տարածքը լքելու պաշտոնական որոշում է կայացվել, ինչն էլ հանգեցնելու է առաջիկայում նրանց վերադարձի արագացմանը: Նրանց վերադարձը ձգձգվում է տարբեր հանգամանքների բերումով[70], սակայն ի

67 Հայաստանում չկան պատերազմական գործողություններ, մարդու իրավունքների համատարած ոտնահարում և այլն:

68 Վ. Սաթևոսյան, «Միգրացիան թվերով. վերլուծական տեղեկագիր: Եվրոպայում միջազգային պաշտպանություն որոնող ՀՀ քաղաքացիները»: Միգրացիոն ծառայություն, 2019թ: Հասանելի է՝ http://www.miglib.org/sites/default/files/migration_in_figures_0.pdf

69 Տես վիճակագրությունը սույն զեկույցի հավելված 3–ում:

70 Հնարավոր չի լինում իրականացնել ճամփորդական փաստաթղթերի կամ անձը հաստատող այլ փաստաթղթերի բացակայության կամ կեղծ տվյալների առկայության

վերջո հայտնվելով անկանոն կարգավիճակում (օրինակ՝ մերժված ապաստան հայցողներ, առանց փաստաթղթերի միգրանտներ և այլն)՝ կամավոր կամ հարկադիր վերադառնում են Հայաստան:

Առկա վիճակագրական տվյալները հնարավորություն են տալիս որոշակի պատկերացում կազմել Հայաստան վերադարձի հոսքերի, ինչպես նաև առաջիկա տարիներին կանխատեսվող վերադարձի հոսքերի մասին:

- **Հետընդունման (ռեադմիսիոն) համաձայնագրերի շրջանակներում ստացվող հայցերի** (առանցթույլտվության բնակվող անձանց) քանակը տարեցտարի ավելանում է: Այսպես, եթե 2015թ-ին ԵՄ երկրներից ստացվել է 146 հայց, ապա արդեն 2018թ. ստացվել է 989 ռեադմիսիոն հայց: Ռեադմիսիոն հայցեր ուղարկող ԵՄ երկրների թիվը 2014թ-ի 2-ի փոխարեն (Շվեդիա և Լեհաստան) 2019թ-ին դարձել է 10-ը: Պատասխանների ավելի քան 80%-ի պարագայում ՀՀ քաղաքացիություն ունենալու փաստը հաստատվում է: Վերջին երեք տարիներին ռեադմիսիոն հայցեր ուղարկող առաջատար երկիրը Գերմանիան է, որը 2017թ-ին ուղարկել է 499 հայց (1022 անձանց մասին), 2018թ-ին՝ 681 հայց (1385 անձանց մասին), իսկ 2019թ-ի ստացվել է 587 հայց՝ 1182 անձանց մասին, որից 1043 անձանց ՀՀ քաղաքացիությունը հաստատվել է: Ընդհանուր առմամբ վերջին տարիներին ԵՄ երկրներից ստացվող ռեադմիսիոն հայցերի թվի աճի միտումը շարունակվել է նաև 2019-ի ընթացքում[71]: Այսպես, 2019թ-ի ընթացքում ԵՄ անդամ 10 երկրներից ստացվել են 870 ռեադմիսիոն հայցեր՝ 1656 անձանց վերաբերյալ, որից 1444 անձանց ՀՀ քաղաքացիությունը հաստատվել է[72]:
- Ըստ **Եվրոստատի**[73] տվյալների, 2017թ-ի ընթացքում 5350 ՀՀ քաղաքացիների՝ ՀՀ վերադարձնելու վերաբերյալ որոշում է կայացվել, սակայն նրանցից փաստացի վերադարձել է ընդամենը 1470 անձ (24,7%): 2018թ. ընթացքում 4135 ՀՀ քաղաքացիներ պետք է վերադառնային իրենց ծագման երկիր, որոնցից փաստացի վերադարձել է ընդամենը 2030 անձ: Ընդհանուր առմամբ, 2009-2018թթ. ընթացքում ԵՄ անդամ պետություններում ընդունվել է 46,945 ՀՀ քաղաքացիների վերադարձնելու մասին որոշում: Միևնույն ժամանակ, 2009-2018թթ. ընթացքում ԵՄ անդամ պետություններից փաստացի

դեպքերում: Շատերը, ամեն կերպ փորձելով հաստատվել եվրոպական որևէ երկրում, կրկնակի ապաստանի հայցեր են ներկայացնում, որի հետևանքով երկարատև մի գործընթաց է սկսվում, որը երբեմն տարիներ է տևում և այլն:

71 Տես վիճակագրությունը՝ սույն զեկույցի հավելված 2-ում:

72 Տես վիճակագրությունը սույն զեկույցի հավելված 1-ում:

73 Eurostat statistics: հասանելի է՝ https://ec.europa.eu/eurostat/web/asylum-and-managed-migration/data/database

Հայաստան են վերադարձվել 12,050-ը ՀՀ քաղաքացներ[74]:

- **Վերաինտեգրման ծրագրեր** իրականացնող կազմակերպությունների և ՀՀ ՏԿԵՆ Միգրացիոն ծառայությունում գործող **Վերաինտեգրման «մեկ պատուհան»** ծառայության տվյալները հնարավորություն են տալիս պատկերացում կազմել փաստացի վերադարձի մասին: Ըստ այդմ, 2018թ. ընթացքում Հայաստան է վերադարձել և վերաինտեգրման ծրագրերին դիմել **1771** ՀՀ քաղաքացի, իսկ 2019թ.-ին՝ **2359** քաղաքացի:

Մաս 2. Վերադարձի և վերաինտեգրման ոլորտում ՀՀ պետական քաղաքականությունը

ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Միգրացիոնծառայությանն են հասցեագրվել ներքոնշյալ հարցերը՝ հաշվի առնելով Հայաստանում ռեադմիսիոն համաձայնագրերի կիրարկման լիազոր մարմին լինելու նրանց կարգավիճակը.

1. *Ինչպիսի՞ միտումներ կան ԵՄ երկրներից ռեադմիսիոն հայցերի ստացման և մեր քաղաքացիների փաստացի վերադարձի առումով: Ինչպիսի՞ն է 2019թ.-ի ռեադմիսիոն վիճակագրությունը և փաստացի վերադարձի վիճակագրությունը:*
2. *Ի՞նչ քայլեր են ձեռնարկվել և/կամ ձեռնարկվում Միգրացիոն ծառայության կողմից՝ նպաստելու Հայաստան վերադարձող միգրանտների վերաինտեգրման գործընթացի հաջող և շարունակական իրականացմանը:*
3. *Ի՞նչ նոր զարգացումներ են տեղի ունեցել վերադարձին և վերաինտեգրմանն ուղղված պետական քաղաքականության մշակման ոլորտում:*
4. *Խնդրում ենք տեղեկություններ տրամադրել նաև Ռեադմիսիոն դեպքերի կառավարման էլեկտրոնային համակարգի մշակման և ներդրման աշխատանքների ընթացքի մասին:*

ՀՀ ՏԿԵՆ Միգրացիոն ծառայության կողմից 2020 թվականի փետրվարի 10-ին ուղարկած մեր հարցմանն ի պատասխան ստացված գրությունից տեղեկանում ենք հետևյալը:

Պայմանավորված վերադարձի և վերաինտեգրման ոլորտի կարևորությամբ, 2019թ-ի ընթացքում իրականացվել են մի շարք փոփոխություններ

74 Վ. Սաթևոսյան «Միգրացիան թվերով. վերլուծական տեղեկագիր: Եվրոպայում անօրինական բնակվող և վերադարձված ՀՀ քաղաքացիները»: Միգրացիոն ծառայություն, 2019թ: Հասանելի է՝ http://www.miglib.org/sites/default/files/migration_in_figures_2019_1_B.pdf?fbclid=IwAR2ezCd1tLR381Zu7VGfFnPW_HPNIAcixftww_f1y2owHaRSSnemxjJ-obc

քաղաքականության և ինստիտուցիոնալ առումներով, այսպես՝

- Չնայած նրան, որ 2000-ականներից ի վեր բավականին զգալի էր դեպի Հայաստան քաղաքացիների վերադարձի միտումը, այնուամենայնիվ, գոյություն ունեցող ինտեգրման քաղաքականությունը չէր անդրադառնում նրանց վերաինտեգրման խնդիրներին: Վերադարձողների վերաինտեգրման կարիքներին ուղղված քայլերը հիմնականում իրականացվում էին միջազգային և հասարակական կազմակերպությունների ջանքերով ծրագրային (և ոչ քաղաքականության) մակարդակում: Ուստի, Հայաստանի կառավարության ծրագրի[75] հավելվածի 6.7-րդ կետի համաձայն՝ 2019թ-ի ընթացքում Միգրացիոն ծառայության կողմից մշակվեց **«Հայաստանի Հանրապետության միգրացիոն քաղաքականության՝ ինտեգրման և վերաինտեգրման խնդիրների կարգավորման 2021-2031 թվականների ռազմավարության» նախագիծը**[76]**,** որը 2020թ-ի ընթացքում ներկայացվելու է ՀՀ կառավարության հաստատմանը: Ռազմավարութան նպատակն է քաղաքականության ռազմավարական ուղղությունների հետազոտահեն ձևակերպումը՝ հաշվի առնելով միգրացիոն հոսքերի առկա և ակնկալվող իրավիճակը, թիրախ խմբերի կարիքները, ՀՀ զարգացման գերակայությունները և միջազգային պարտավորությունները:
- Միգրացիոն ծառայության կողմից նախաձեռնված ինստիտուցիոնալ փոփոխությունների արդյունքում 2019 թվականի փետրվարից ձևավորվել և գործում է ***Վերադարձի և վերաինտեգրման բաժինը:*** Բաժնի հիմնական գործառույթներից են ՀՀ վերադարձող քաղաքացիների վերաինտեգրման ռազմավարությունների մշակումը և ՀՀ վերադարձող քաղաքացիների վերաինտեգրմանն ուղղված ծրագրերի իրականացումը:
- Բաժնի կողմից մշակվել և ՀՀ կառավարության հաստատմանն է ներկայացվել «**ՀՀ վերադարձող (այդ թվում հարկադիր վերադարձող) քաղաքացիների վերաինտեգրմանն ուղղված առաջնային աջակցության պետական ծրագրի մասին**» ՀՀ կառավարության որոշման նախագիծը[77]: **Ծրագրի նպատակն է** առաջնային օժանդակություն ցուցաբերել Հայաստան վերադարձող ՀՀ քաղաքացիներին՝ հետագայում նրանց լիարժեք և կայուն վերաինտե-

75 Հաստատվել է ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի 65-Ա որոշմամբ

76 Հայաստանի Հանրապետության միգրացիոն քաղաքականության՝ ինտեգրման եվ վերաինտեգրման խնդիրների կարգավորման 2021-2031 թվականների ռազմավարությունը հաստատելու մասին կառավարության որոշում, հասանելի է՝https://www.e-draft.am/projects/2298

77 «ՀՀ վերադարձող քաղաքացիների վերաինտեգրմանն ուղղված առաջնային աջակցության պետական ծրագրի մասին» ՀՀ կառավարության որոշում, հասանելի է՝ https://www.e-draft.am/projects/1976/about

գրումը ապահովելու նպատակով:

Ծրագիրը բաղկացած է երկու բաղադրիչից՝ տեղեկատվական աջակցության տրամադրում և գնահատված կարիքներին համապատասխան ուղղորդում, ինչպես նաև կացարանով ապահովում: Առաջին բաղադրիչը վերաբերում է ինչպես կամավոր, այնպես էլ հարկադիր վերադարձող ՀՀ քաղաքացիներին, իսկ երկրորդ բաղադրիչը՝ միայն հարկադիր վերադարձած ՀՀ քաղաքացիներին: Ժամանակավոր կացարանով ապահովումը նախատեսում է բնակարան վարձակալելու համար սուբսիդիայի տրամադրում՝ 6 ամիս տևողությամբ, 60.000 ՀՀ դրամի չափով: Ծրագրի թիրախային խմբեր են սահմանվել հետընդունման (ռեադմիսիոն) համաձայնագրերի շրջանակներում վերադարձողները և օտարերկրյա պետություններից արտաքսված կամ վտարված ՀՀ քաղաքացիները:

Ծրագրի շրջանակներում առաջնահերթությունը տրվելու է հետևյալ խոցելի խմբերին՝

ա) բազմազավակ ընտանիքներին (4 և ավելի երեխաներ ունեցող),

բ) տարեցներին (65 տարին լրացած),

գ) հաշմանդամություն ունեցող անձանց,

դ) անհետաձգելի բուժօգնության կարիք ունեցող անձանց,

ե) առանց ուղեկցության վերադարձած և Հայաստանում առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին:

Ծրագրի հաստատման անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ չնայած մի շարք վերադարձի խրախուսման ծրագրերի առկայությանը, այնուամենայնիվ, ՀՀ հարկադիր վերադարձողների համար նախատեսված պետական օժանդակության որևէ ծրագիր առ այսօր չի իրականացվել: Բացի այդ, վերաինտեգրման աջակցության ծրագրերը թիրախավորում են հիմնականում կամավոր վերադարձող միգրանտներին, և հարկադիր վերադարձող մեր քաղաքացիները դուրս են մնում աջակցության որևէ հնարավորությունից: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ ծրագրի հիմքում ընկած է անձանց խոցելիությունը, այլ ոչ թե նրանց միգրացիոն փորձառություն ունենալու հանգամանքը:

Ծրագրի ընդունումը կարևոր քայլ է ՀՀ-ԵՄ ռեադմիսիոն համաձայնագրի շրջանակներում պարտավորությունների իրականացման արդյունքում առաջացած խնդիրների լուծման ուղղությամբ, ինչն էլ կարևոր է ՀՀ-ԵՄ միջև մուտքի արտոնագրային ռեժիմի ազատականացման երկխոսության մեկնարկի համար:

Բացի վերը նշված միջոցառումներից, 2019թ-ի ընթացքում տեղի են ունեցել հետևյալ նշանակալից իրադարձությունները՝

- 2019թ-ի ապրիլի 2-ին Երևանում կայացավ **ՀՀ-ԵՄ առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի)**

մասին համաձայնագրի իրականացման հարցերով համատեղ կոմիտեի 5-րդ նիստը[78]: Եվրոպական կողմը բարձր գնահատեց ՀՀ-ի և ԵՄ-ի միջև ստորագրված ռեադմիսիոն համաձայնագրի հայկական կողմի ջանքերը՝ պարտավորությունների կատարման ուղղությամբ:

- 2019թ-ի ապրիլի 9-ին Բրյուսելում տեղի ունեցավ **Արդարադատության, ազատության և անվտանգության հարցերով ԵՄ-ՀՀ ենթակոմիտեի 10-րդ նիստը**: Կողմերը քննարկել են 2018 թվականի մայիսին Երևանում տեղի ունեցած վերջին նիստից հետո գրանցված առաջընթացը[79]:
- 2019թ-ի սեպտեմբերի 13-ին Երևանում տեղի ունեցավ **ՀՀ-ԵՄ Մուտքի արտոնագրերի դյուրացման հարցերով համատեղ Գործընկերության կոմիտեի 5-րդ նիստը**[80]: Կողմերն ընդգծեցին ՀՀ-ԵՄ Մուտքի արտոնագրերի դյուրացման մասին համաձայնագրի կիրարկման գործընթացում գրանցված առաջընթացը և քննարկեցին հետագա քայլերը՝ ուղղված Համաձայնագրի լիարժեք իրագործմանը և արդյունավետության առավել բարձրացմանը:
- Սերտ և շարունակական համագործակցություն է հաստատվել **ԵՄ Սահմանային և առափնյա պահպանության եվրոպական գործակալության (FRONTEX) և Միգրացիոն ծառայության միջև**: Այսպես, 2019թ-ի սեպտեմբերի 25-26-ը վերադարձի և հետընդունման ոլորտում ներգրավված աշխատակիցների համար FRONTEX-ի կողմից կազմակերպվել է կարողությունների զարգացմանն ուղղված վերապատրաստում: Դրան հետևել է սեպտեմբերի 27-ին կայացած «ԵՄ-ի՝ վերադարձի ոլորտում լավագույն փորձի» վերաբերյալ սեմինարը: Բացի այդ, հայկական կողմից ներկայացվել են նաև նոր համագործակցության առաջարկներ, որոնք FRONTEX-ի կողմից քննարկման փուլում են[81]:

---

78 ՀՀ-ԵՄ **համատեղ ռեադմիսիոն կոմիտեի 5-րդ նիստը:** http://migration.am/news/80

79 **Բրյուսելում տեղի ունեցավ արդարադատության, ազատության և անվտանգության հարցերով ԵՄ-ՀՀ ենթակոմիտեի 10-րդ նիստը:** https://www.facebook.com/eudelegationtoarmenia/posts/2188546894532561?__tn__=K-R

80 **ՀՀ-ԵՄ Մուտքի արտոնագրերի դյուրացման հարցերով համատեղ կոմիտեի 5-րդ նիստի վերաբերյալ**
https://www.mfa.am/hy/press-releases/2019/09/13/eu_am/9819

81 Վերապատրաստում «ֆրոնտեքս»-ից՝վերադարձի ոլորտում: http://migration.am/news/228

Մաս 3. ԵՄ մուտքի արտոնագրերի ազատականացման երկխոսության մեկնարկի շուրջ իրականացվող քայլեր

ՀՀ կառավարության գերակա ուղղություններից է Հայաստանի քաղաքացիների համար ԵՄ-ի մուտքի արտոնագրերի ազատականացումը: Կառավարությունը 2019թ-ի ընթացքում շարունակել է քայլեր ձեռնարկել այդ գործընթացի ապահովման ուղղությամբ[82]: Այս մասին ամրագրված է նաև՝ ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կիրարկման ճանապարհային քարտեզում: Մասնավորապես՝ դրանք ուղղված են եղել ԵՄ երկրներում ապաստան հայցող ՀՀ քաղաքացիների թվի կրճատմանը, նրանց վերադարձի և վերաինտեգրման ապահովմանը: Բացի այդ, 2019թ-ի ընթացքում հայկական կողմի նախաձեռնությամբ երկկողմ այցելություններ են իրականացվել առանցքային կարևորություն ներկայացնող ԵՄ երկրներ՝ **ԵՄ մուտքի արտոնագրերի ազատականացման երկխոսության շուրջ մեկնարկի խթանման** բանակցությունների նպատակով: Հայկական պատվիրակության կազմում ընդգրկված են ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Միգրացիոն ծառայության, ՀՀ արտաքին գործերի նախարարության և ՀՀ ոստիկանության պաշտոնյանները, իսկ վերջին մի քանի այցերի ընթացքում պատվիրակությունը ղեկավարել է Միգրացիոն ծառայության պետ Արմեն Ղազարյանը: Այսպես, պատվիրակությունը պաշտոնական այցով եղել է Գերմանիայում[83], Ավստրիայում[84], Բելգիայում, Նիդերլանդներում և Լյուքսեմբուրգում[85], Ֆրանսիայում[86], Իսպանիայում, Շվեդիայում և Ֆինլանդիայում:

Ի լրումն վերոնշյալ միջոցառումների, ՀՀ-ԵՄ մուտքի արտոնագրերի

---

82 ՀՀ կառավության ծրագիր 2019թ. հասանելի է՝ https://www.gov.am/files/docs/3133.pdf, էջ 18

83 Հայաստանը ձեռնամուխ է եղել ԵՄ անդամ պետությունների հետ վիզային ռեժիմի ազատականացման շուրջ երկխոսության մեկնարկին, https://armenpress.am/arm/news/961298.html?fbclid=IwAR1z2b8pPg5wixxhBWP4vJLe52I5y6h-n2IpXqFjCHkcLRL38uR62Eip-T_0

84 ՀՀ ոստիկանության պետի տեղակալի գլխավորած միջգերատեսչական պատվիրակությունն այցելեց Ավստրիա՝ քննարկելու ՀՀ-ԵՄ մուտքի արտոնագրերի ազատականացման շուրջ երկխոսության մեկնարկի հեռանկարները, http://www.police.am/news/view/%d5%b0%d5%b0-%d5%a5%d5%b4-%d5%b4%d5%b8%d6%82%d5%bf%d6%84%d5%ab-%d5%a1%d6%80%d5%bf%d5%b8%d5%b6%d5%a1%d5%a3%d6%80%d5%a5%d6%80290719.html?fbclid=IwAR1ObbJy0WT_CjqkgeSCBxQU9DRWK_aYoNPh06anE0w0g9FD3RippRrJgrU

85 ԱԳ նախարարի տեղակալ Ավետ Ադոնցի հարցազրույցը «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթին, 12 սեպտեմբերի, 2019, https://www.mfa.am/hy/interviews-articles-and-comments/2019/09/12/adonts_interview/9815?fbclid=IwAR2dNf6ITaP-P07M6b6bd6JcAJQUx6EmukXFSUfb9bEIKUYFJ6gWb6lveass

86 **ՀՀ միջգերատեսչական պատվիրակությունը Ֆրանսիայի գործընկերների հետ փարիզում քննարկեց հի-եմ մուտքի արտոնագրերի ազատականացման շուրջ երկխոսության մեկնարկի հեռանկարները:** http://migration.am/news/217

ազատականացման երկխոսության մեկնարկին էր ուղղված նաև **Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոն**» հասարակական կազմակերպության և «**Եվրոպական կայունության նախաձեռնություն**» հետազոտական կենտրոնի (“European Stability Initiative” think tank) ներկայացուցիչների և փորձագետների այցը Բրյուսելում տեղակայված ԵՄ կառույցներ: Հանդիպումները շատ արդյունավետ էին և լրացնում էին ՀՀ պաշտոնական պատվիրակության կողմից իրականացվող երկկողմ հանդիպումների շարքն ու բանակցային օրակարգը՝ միաժամանակ ցույց տալով նաև քաղաքացիական հասարակության կողմից այս գործընթացի արագացմանն ուղղված շահագրգռվածությունն ու աջակցությունը:

Մաս 4. Հետընդունման (ռեադմիսիայի) համաձայնագրեր

Ծառայությունը շարունակում է ակտիվորեն մասնակցել միգրացիայի հարցերով միջազգային համաձայնագրերի, մասնավորապես՝ հետընդունման (ռեադմիսիայի) մասին մի շարք միջպետական համաձայնագրերի նախապատրաստման և կնքման գործընթացներին: 2013թ.-ի ապրիլի 19-ին «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև առանց թուլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի շրջանակներում 2019թ.-ի ընթացքում կիրարկման երկկողմ համաձայնագրեր են ստորագրվել Գերմանիայի (սեպտեմբերի 10-ին), Չեխիայի[87] (հոկտեմբերի 21-ին) և Բուլղարիայի (հոկտեմբերի 28-ին) հետ: Վավերացման և/կամ համաձայնեցման փուլում են գտնվում Լեհաստանի, Լիտվայի, Լատվիայի և Շվեդիայի հետ կիրարկման արձանագրության նախագծերը:

Բացի այդ, մշակվել են երկկողմ ռեադմիսիոն համաձայնագրերի նախագծեր Իրանի Իսլամական Հանրապետության, Հնդկաստանի, Ուզբեկստանի և Ֆիլիպինների հետ, որոնք դիվանագիտական ուղիներով ներկայացվել են համաձայնեցման:

87 **Քաղաքական խորհրդակցություններ Հայաստանի և Չեխիայի ԱԳՆ-ների միջև** https://www.mfa.am/hy/press-releases/2019/10/22/political_consultatios_arm_cz/9911

Մաս 5. Ռեադմիսիոն հայցերի կառավարման էլեկտրոնային համակարգ

Ըստ Միգրացիոն ծառայության հաղորդած տեղեկությունների, 2019թ-ի փետրվարից շահագործվող **Ռեադմիսիոն հայցերի կառավարման էլեկտրոնային համակարգի (ՌՀԿԷՀ)** միջոցով ներկայումս հետընդունման հայցեր ստացվում են Գերմանիայի, Նիդերլանդների, Լեհաստանի, Բելգիայի, Բուլղարիայի, Ավստրիայի և Ֆրանսիայի միգրացիոն հարցերով զբաղվող համապատասխան մարմինների ներկայացուցիչների կողմից: Նշված երկրներից ստացված հայցերի վարման ամբողջ գործընթացը տեղի է ունենում ՌՀԿԷՀ-ի միջոցով: ԵՄ անդամ երկրներից համակարգին միանալու գործընթացում է նաև Ռումինիան:

Այս ամիսների ընթացքում ՌՀԿԷՀ-ի սահուն աշխատանքը շարունակաբար բարելավվում էր այն շահագործող աշխատակիցների՝ և՛ եվրոպական, և՛ հայկական կողմերի ներկայացուցիչների նկատառումների և առաջարկությունների շնորհիվ: ՀՀ-ԵՄ աշխատանքային տարբեր խողովակներով ևս ընթացիկ տարվա ընթացքում բազմիցս երկկողմանի ջանքեր են գործադրվել՝ կողմերի հնարավորինս անխափան աշխատանքն ապահովելու համար:

Հարկ է նշել, որ համակարգի շահագործումը ամրագրված է նաև ՀՀ-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կիրարկման ճանապարհային քարտեզում[88]:

Մաս 6. Վերադարձի և վերաինտեգրման հարցերով ֆորումի աշխատանքներ

Միգրացիոն ծառայությունը 2018թ.-ից նախաձեռնել և կազմակերպում է **Վերադարձի և վերաինտեգրման հարցերով եռամսյակային ֆորումի եռամսյակային հանդիպումների շարք:** Հարկ է նշել, որ ֆորումի ձևավորման հարցում կարևոր դերակատարում է ունեցել ԵՄ կողմից ֆինանսավորված և Ներգաղթի և ինտեգրման ֆրանսիական գրասենյակի (ՆԻՖԳ) կողմից 2012-2016թթ. իրականացված «Թիրախային նախաձեռնություն Հայաստանի համար» ծրագրի շրջանակներում Հայաստան վերադարձող ՀՀ քաղաքացիներին վերաինտեգրման աջակցություն ցուցաբերող կազմակերպությունների եռամսյակային հանդիպումների ձևաչափը: Մինչ

88 Մաս 3 **«Միգրացիայի, ապաստանի տրամադրման և սահմանների կառավարման հարցերի վերաբերյալ համագործակցությունը, անձանց տեղաշարժը և հետընդունումը», կետ 14, տ**ես էջ՝ 8: https://www.e-gov.am/u_files/file/decrees/varch/2019/19_666_1.pdf

2019թ. վերջ տեղի է ունեցել ֆորումի 7 հանդիպում, որոնց ընթացքում միջազգային կազմակերպությունների և ՀԿ-ների հետ քննարկվել են Հայաստան վերադարձի և վերաինտեգրման հետ կապված խնդիրները, դրանց լուծմանը միտված քայլեր, ոլորտի պետական քաղաքականության հետ կապված հարցեր և այլն: Ֆորումն իրենից ներկայացնում է համագործակցության լավ հարթակ, որին անդամակցում են խնդրին առնչվող պետական, միջազգային և հասարակական կազմակերպությունները: Այն հնարավորություն է ընձեռում ոլորտում ներգրավված շահագրգիռ բոլոր կողմերին փոխանակել տեղեկատվություն Հայաստանում իրականացվող վերաինտեգրման ծրագրերի, առկա խնդիրների և մարտահրավերների քննարկման, ինչպես նաև կուտակված փորձի փոխանակման ուղղությամբ:

Մաս 7. Անօրինական միգրացիայի դեմ պայքարին ուղղված իրազեկման միջոցառումներ

2019թ. ընթացքում պետական, միջազգային և տեղական կազմակերպությունների հետ համատեղ ջանքերով մի շարք միջոցառումներ են իրականացվել անկանոն միգրացիայի վերաբերյալ տեղեկացվածության մակարդակի բարձրացման ուղղությամբ, որոնք ևս նախատեսված և ամրագրված են ՀՀ-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կիրարկման ճանապարհային քարտեզում[89]:

Այսպես, 2019թ-ի ապրիլին Միգրացիոն ծառայության նախաձեռնությամբ մեկնարկել է **«Մեդիա և միգրացիա»** ծրագիրը: Մեկ տարվա մեդիա մոնիթորինգի արդյունքում հրատարակվող թեմատիկ նյութերի որակը բարելավվել է: Տարվա կտրվածքով ծրագրին մասնակցել են ավելի քան հինգ տասնյակ լրագրողներ, թողարկվել են մոտ հարյուր մեդիա հրապարակումներ:

Միգրացիոն ծառայությունը ՄԱԿ-ի միգրացիայի միջազգային կազմակերպության հետ համատեղ նախաձեռնել է **«ՀՀ քաղաքացի պոտենցիալ աշխատանքային միգրանտներին կողմորոշման, ինչպես նաև ՀՀ-ում աշխատող օտարերկրացիներին իրավական խորհրդատվության տրամադրում»** ծրագիրը, որի շրջանակում մշակվել են հինգ առանձին գործողությունների ծրագրեր: Ծրագրի մեկնարկը նախատեսվում է 2020 թ-ին:

Ծառայության կողմից աշխատանքներ են տարվում նաև **«Տունդարձ» տեղեկատվական ինտերնետային կայքի** լրամշակման ուղղությամբ:

---

89 Մաս 3 **«Միգրացիայի, ապաստանի տրամադրման և սահմանների կառավարման հարցերի վերաբերյալ համագործակցությունը, անձանց տեղաշարժը և հետընդունումը», կետ 14, տե**ս էջ՝ 8: https://www.e-gov.am/u_files/file/decrees/varch/2019/19_666_1.pdf

Կայքը նախատեսված է օտարերկրյա պետություններից Հայաստան վերադարձի մտադրություն ունեցող քաղաքացիների համար:

Այն հնարավորություն է ընձեռում ստանալ օգտակար տեղեկատվություն մեկնման, վերադարձի և հայրենիքում վերաինտեգրման գործընթացների վերաբերյալ: Համակարգը բաղկացած է վերադարձին ու վերաինտեգրմանը վերաբերող առանձին ոլորտների մասին տեղեկություններ պարունակող բաժիններից, ինչպես նաև համապատասխան գործիքներից, որոնք հնարավորություն են ընձեռում քաղաքացիներին իրենց հուզող հարցերն անմիջականորեն ուղղելու Հայաստանի պետական կառավարման մարմիններին:

Մաս 8. 2019թ. ընթացքում վերաինտեգրման «մեկ պատուհան» ծառայություն դիմած քաղաքացիների վերաբերյալ վիճակագրություն

2019թ. հունվար–դեկտեմբեր ամիսների ընթացքում «մեկ պատուհան» ծառայությանը դիմել և վերաինտեգրման ծրագրերին ուղղորդվել է 40 վերադարձող միգրանտ (ընտանիքի անդամները ներառյալ), բոլորն էլ՝ Գերմանիայից: Նրանցից 20–ը վերադարձել են կամավոր, 20–ը՝ հարկադիր:

Նշված ժամանակահատվածում տարբեր սոցիալական և իրավական հարցերի շուրջ խորհրդատվություն և տեղեկատվություն ստանալու նպատակով ծառայություն են այցելել 30 և զանգահարել 24 քաղաքացիներ[90]:

Քաղաքացիներն ամենից հաճախ դիմել են ծառայություն՝ ստանալու տեղեկատվություն

- ✓ ԵՄ երկրից արտաքսման գործընթացի,
- ✓ ԵՄ երկրից կամավոր վերադարձի կազմակերպման,
- ✓ վերադարձից հետո հայրենիքում վերաինտեգրման հնարավորությունների,
- ✓ ոլորտում իրականացվող վերաինտեգրման ծրագրերի և դրանց շրջանակներում հատկացվող աջակցության տեսակների,
- ✓ արտերկրում ծնված երեխայի ծննդականում ապոստիլի բացակայության հետևանքով առաջացած խնդիրների լուծման,
- ✓ ՀՀ վերադարձից հետո ծննդյան միանվագ նպաստ ստանալու գործընթացի,
- ✓ ՀՀ տարածք ներմուծվող անձնական օգտագործման իրերի մաքսազերծման,
- ✓ վերադարձից հետո տարեց անձանց տուն–ինտերնատում տեղավո–

90 Վերաինտեգրման «մեկ պատուհան» ծառայության վերաինտեգրման հարցերով խորհրդատու

րելու և այնտեղ վերջիններիս խնամքը կազմակերպելու հարցերի շուրջ:

Ընդհանուր առմամբ իրենց կարիքներին համապատասխան խորհրդատվություն և ուղղորդման ծառայություն տրամադրվել է **94** քաղաքացու, ովքեր ուղղորդվել են ոչ միայն կոնկրետ վերաինտեգրման ծրագրի աջակցություն ստանալու նպատակով, այլ նաև համապատասխան պետական մարմիններ և կառույցներ:

Մասնավորապես, վերադարձածներն ուղղորդվել են Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի (ICMPD**)** կողմից իրականացվող «ERRIN Հայաստան» ծրագրին, Միգրացիայի միջազգային կազմակերպության հայաստանյան գրասենյակ, ՀՕՖ-ի «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամ, ՀՀ ԱՍՀՆ զբաղվածության պետական գործակալություն, ՀՀ առողջապահության նախարարություն, այլ առողջապահական կազմակերպություններ:

Մաս 9. Վերաինտեգրման ծրագրերի շրջանակներում ՀՀ վերադարձած միգրանտների վերաբերյալ վիճակագրություն (2018-2019թթ.)

2018թ. սկսած ՀՀ ՏԿԵՆ Միգրացիոն ծառայությունը, ոլորտում գործունեություն ծավալող միջազգային, հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությամբ, հավաքագրում և ամփոփում է իրականացվող վերաինտեգրման ծրագրերի շրջանակներում վերադարձող միգրանտների վերաբերյալ վիճակագրությունը: Վիճակագրությունը հավաքագրվում է կիսամյակային և տարեկան կտրվածքով՝ նախապես մշակված ձևաչափին համապատասխան: Ամփոփված վիճակագրությունը ներկայացվում է ՀՀ վերադարձող քաղաքացիների հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպությունների ֆորումի եռամսյակային հանդիպումների ընթացքում:

Վիճակագրության հավաքագրման և ֆորումի կազմակերպչական աշխատանքներին աջակցում է Միգրացիոն ծառայությունում գործող Վերաինտեգրման «մեկ պատուհան» ծառայությունը:

Քանի որ իրականում բացակայում է Հայաստան վերադարձող ՀՀ քաղաքացիների վերաբերյալ պաշտոնական վիճակագրությունը, ուստի ստորև ներկայացված վիճակագրությունը թույլ է տալիս պատկերացում կազմել առնվազն վերաինտեգրման ծրագրերի շրջանակներում ՀՀ վերադարձած անձանց թվաքանակի վերաբերյալ:

Իրենց ծրագրերի շրջանակներում վերադարձած միգրանտների մասին

վիճակագրական տվյալներ տրամադրել են՝ «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ն, Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի հայաստանյան գրասենյակը (ՄՔՄՄԿ), «Միգրացիայի միջազգային կազմակերպության» հայաստանյան գրասենյակը (ՄՄԿ), «Ներգաղթի և ինտեգրման ֆրանսիական գրասենյակի (ՆԻՖԳ) ծառայություն մատուցող կազմակերպությունները՝ «Կայուն զարգացման հայկական հիմնադրամը» (ԿԶՀՀ), «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ն, «Գործարար Նախաձեռնությունների Հզորացում և Զարգացում» ՀԿ-ն, «Քվոլիֆայդ Սմարտ Էսիստանց» կազմակերպությունը, «Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ» հիմնադրամը, ինչպես նաև «Մեկ պատուհան» ծառայությունը:

Ըստ վիճակագրության, 2018թ. ընթացքում Հայաստան է վերադարձել և վերաինտեգրման ծրագրերին/«Մեկ պատուհան» ծառայությանը դիմել 1771 քաղաքացի (գծ. 1), որից 1493-ը՝ կամավոր, 278-ը՝ հարկադիր վերադարձած միգրանտներ են (գծ. 2):



Գծապատկեր 1. Վերաինտեգրման ծրագրերի շրջանակներում և «Մեկ պատուհան» ծառայությանը դիմած վերադարձողների թիվը, 2018թ.



Գծապատկեր 2. Վերադարձողների թիվն ըստ վերադարձ

տեսակի, 2018թ.

2019թ. տվյալներով վերադարձողների թիվը կազմել է 2359 (գծ. 3), որից 1852-ը կամավոր, 507-ը՝ հարկադիր վերադարձած միգրանտներ են (գծ. 4):



Գծապատկեր 3. Վերաինտեգրման ծրագրերի շրջանակներում և «Մեկ պատուհան» ծառայությանը դիմած վերադարձողների թիվը, 2019թ.



Գծապատկեր 4. Վերադարձողների թիվն ըստ վերադարձ տեսակի, 2019թ.

Ինչ վերաբերում է վերադարձողների թվաքանակին ըստ երկրների, ապա 2018թ. միգրացիոն օրենսդրության խստացմամբ պայմանավորված հետդարձի ամենաբարձր ցուցանիշները գրանցվել են Գերմանիայից (**59%**), այնուհետև՝ Ֆրանսիայից (**21%**) և Նիդերլանդներից (**4%**) (աղ. 1):



Աղյուսակ 1. Վերադարձողների թիվն ըստ երկրների, 2018թ.

Ինչպես երևում է աղյուսակ 2-ում ներկայացված տվյալներից, 2019թ. հետդարձի ամենաբարձր ցուցանիշները դարձյալ գրանցվել են Գերմանիայից (**70%**) և Ֆրանսիայից (**18%**), այնուհետև՝ Բելգիայից (**4%**)**:**



Աղյուսակ 2. Վերադարձողների թիվն ըստ երկրների, 2019թ.

Թե՛ 2018թ. և թե՛ 2019թ. վերադարձած միգրանտների մեջ գերակշռում են չափահասները, որոնք կազմում են համապատասխանաբար 76% (գծ. 5) և 69% (գծ. 6):



Գծապատկեր 5. Վերադարձողների տարիքային կազմը, 2018թ.



Գծապատկեր 6. Վերադարձողների տարիքային կազմը, 2019թ.

Ինչ վերաբերում է վերջիններիս սեռային կազմին, ապա այս դեպքում նույնպես գերակշռում են տղամարդիկ՝ համապատասխանաբար 52% (գծ. 7) և 53% (գծ. 8):



Գծապատկեր 7. Վերադարձողների սեռային կազմը, 2018թ.



Գծապատկեր 8. Վերադարձողների սեռային կազմը, 2019թ.

2019թ. տվյալներով վերադարձողների գերակշռող մասը՝ 54%-ը, մարզերից են (գծ. 9):



Գծապատկեր 9. Վերադարձողների թիվն ըստ մարզերի, 2019թ.

Գծապատկեր 10-ում ներկայացված է 2019թ. վերադարձած միգրանտների կրթական մակարդակը, ըստ որի վերադարձողների մեջ գերակշռում են միջնակարգ կրթություն ունեցողները (60%): Ներկայացված վիճակագրության մեջ ներառված չեն միայն ՄՄԿ տվյալները:



Գծապատկեր 10. Վերադարձողների կրթական մակարդակը, 2019թ.

«Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի և «Ներգաղթի և ինտեգրման ֆրանսիական գրասենյակի (ՆԻՖԳ) կողմից 2018թ. ընթացքում սոցիալական աջակցություն ստացել է 163, զբաղվածության՝ 25 և բիզնես աջակցություն՝ 117 միգրանտ (գծ. 11):



Գծապատկեր 11. ՆԻՖԳ և Հայկական Կարիտաս-ի կողմից վերաինտեգրման աջակցություն ստացած շահառուների թիվն ըստ աջակցության տեսակների, 2018թ.

Ինչ վերաբերում է ՄՄԿ վիճակագրությանը, ապա դիտարկվող ժամանակահատվածում ՄՄԿ կողմից վերաինտեգրման աջակցություն ստացած շահառուների տվյալները ներկայացված են ստորև (գծ. 12): Վիճակագրությունը ներկայացված է տոկոսային հարաբերակցությամբ, քանի որ բացակայում է վերաինտեգրման աջակցություն ստացած շահառուների վերաբերյալ հստակ քանակական վիճակագրությունը:



Գծապատկեր 12. ՄՄԿ-ի կողմից վերաինտեգրման աջակցություն ստացած շահառուների թիվն ըստ աջակցության տեսակների, 2018թ.

Գծապատկեր 13-ում էլ ներկայացված է 2019թ. ընթացքում վերաինտեգրման աջակցություն ստացած շահառուների վերաբերյալ վիճակագրությունը, ըստ որի 2019թ. ընթացքում սոցիալական աջակցություն ստացել է 1444, զբաղվածության՝ 131 և բիզնես աջակցություն՝ 764 միգրանտ (գծ. 13): Ընդհանուր առմամբ 2359 վերադարձողից վերաինտեգրման աջակցություն ստացել է 2339-ը՝ **99%:**



Գծապատկեր 13. Վերաինտեգրման աջակցություն ստացած շահառուների թիվն ըստ աջակցության տեսակների, 2019թ.

Մաս 10. Եզրակացություններ և առաջարկություններ

Ամփոփելով 2019թ-ի ընթացքում ՀՀ-ԵՄ առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) համաձայնագրի շրջանակներում ՀՀ կառավարության կողմից իրականացված միջոցառումները, պետք է նշել, որ համաձայնագրի կիրարկման պարտավորությունների կատարման առնչությամբ Հայաստանի կողմից շարունակաբար առաջընթաց է արձանագրվում: ԵՄ պաշտոնյաների կողմից մի շարք առիթներով բարձր են գնահատվել հայկական իշխանությունների կողմից ներդրվող ջանքերը և պատրաստակամությունը համաձայնագրի արդյունավետ իրականացման առնչությամբ:

Դա են փաստում ինչպես հայկական կողմից անձանց քաղաքացիությունը պարզելու մեծ տեսակարար կշիռը (80%), այնպես էլ՝ այն բոլոր գործնական քայլերը, որոնք ուղղված են այդ գործընթացը առավել արագ և արդյունավետ իրականացնելուն:

Հարկ է նշել, որ հայկական իշխանությունների՝ հատկապես՝ հետընդունման և վերադարձի գործընթացի բարելավման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների շնորհիվ, ԵՄ երկրներում ՀՀ քաղաքացիների կողմից

առաջին անգամ ներկայացվող ապաստանի հայցի դիմումները տարեցտարի նվազում են, այսպես՝ 2017թ–ին ներկայացվել են 6,875 հայցեր, 2018թ–ին՝ 4,815, իսկ 2019թ–ին՝ 3525 հայցեր [91]:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ որոշակի քայլեր են ձեռնարկվել նաև մեր կողմից 5–րդ զեկույցում բարձրացրած առաջարկությունների առնչությամբ[92]: Մասնավորապես, **ՀՀ վերադարձող քաղաքացիների վերաինտեգրման աջակցությանն ուղղված պետական քաղաքականության և ծրագրի մշակումը,** որի ուղղությամբ մասնավորապես՝ 2019թ–ի թվականի ընթացքում մշակվեցին **«Միգրացիոն քաղաքականության՝ ինտեգրման և վերաինտեգրման խնդիրների կարգավորման պետական ռազմավարությունը» և «ՀՀ վերադարձող (այդ թվում հարկադիր վերադարձող) քաղաքացիների վերաինտեգրմանն ուղղված առաջնային աջակցության պետական ծրագրի մասին»** ՀՀ կառավարության որոշման նախագծերը, որոնք, սակայն, դեռևս չեն հաստատվել Կառավարության կողմից:

Չնայած այն հանգամանքին, որ 2019թ–ի ընթացքում հասարակական, միջազգային և պետական կազմակերպությունների կողմից որոշ քայլեր են իրականացվել նաև **միգրացիոն հարցերի շուրջ բնակչության շրջանում իրազեկման մակարդակի բարձրացման ուղղությամբ,** այնուամենայնիվ, Հայաստանի համար միգրացիոն ոլորտում կարևորագույն մարտահրավերներից մեկը դեռևս շարունակում է մնալ անկանոն միգրացիայի ռիսկերի ու հետևանքների մասին բնակչության իրազեկվածության մակարդակի բարձրացման անհրաժեշտությունը: Այս քարոզարշավները պոտենցիալ միգրանտներին օգնում են լինել տեղեկացված և կայացնել գիտակցված որոշումներ, քանի որ նրանք հաճախ տեղեկատվություն չունեն կամ ապավինում են կեղծ տեղեկություններին: Կրկին առաջարկում ենք շարունակական դարձնել **իրազեկման բարձրացման ուղղությամբ տարվող աշխատանքները ոչ միայն Հայաստանում, այլ նաև, հնարավորության դեպքում, արտերկրո ւմ (անկանոն կարգավիճակում) գտնվող մեր հայրենակիցների շրջանում:**

Կարևոր է հստակ տեղեկություններ տրամադրել և իրազեկել բնակչությանը նաև Կառավարության կողմից **ԵՄ մուտքի արտոնագրերի ազատականացմանն** ուղղված միջոցառումների և ակնկալվող հնարավորությունների մասին՝ միևնույն ժամանակ նախապատրաստելով հասարակությանը առանց մուտքի արտոնագրերի ճամփորդելու հնարավորությունների և ընթացակարգերը խախտելու դեպքում՝ հետևանքների մասին:

91 Եվրոստատի տվյալներ

92 ՀՀ–ԵՄ հետընդունման (ռեադմիսիայի) համաձայնագրի կիրարկման մշտադիտարկման 5–րդ զեկույց: Տես էջ՝ 90: http://eapmigrationpanel.org/sites/default/files/5th_monitoring_report_eu–arm–visa–readmission.pdf?utm_source=News%20Digest%20Issue%2049&utm_medium=e–mail&utm_campaign=News%20Digest%20Issue%2049

Հավելված 1

Ստացված ռեադմիսիոն հայցերի թիվը ըստ երկրների, 01.01.2019-31.12.2019թ.-ի վիճակագրությունը

	Հայցը ներկայացնող պետությունը	Ստացված հայցերի թիվը	Հայցերում նշված անձանց թիվը	Քաղաքացիությունը հաստատված անձանց թիվը	Քաղաքացիությունը չհաստատված անձանց թիվը	Դրական պատասխանների %-ը
	ա) ԵՄ երկրներ	***870***	***1656***	***1444***	***212***	***87.20%***
1	Ավստրիա	48	96	60	36	62.50%
2	Բուլղարիա	1	1	1	0	100.00%
3	Բելգիա	19	29	26	3	89.66%
4	Ֆինլանդիա	1	1	1	0	100.00%
5	Գերմանիա	587	1182	1043	139	88.24%
6	Լեհաստան	16	24	23	1	95.83%
7	Նիդերլանդներ	29	42	36	6	85.71%
8	Շվեդիա	41	94	80	14	85.11%
9	Շվեցարիա	1	4	4	0	100.00%
10	Ֆրանսիա	127	183	170	13	92.90%
	բ) ԵԱՏՄ երկրներ					
1	Ռուսաստան	51	90	61	29	67.78%
	Ընդամենը	**921**	**1746**	**1505**	**241**	**86.20%**
	**դրական պատասխանների %-ը հաշվարկվում է տարվա ընթացքում քաղաքացիությունը չհաստատված անձանց թվի և քաղաքացիությունը հաստատված անձանց թվի ընդհանուր գումարից*					

Հավելված 2

Սպացված ռեադմիսիոն հայցերի դինամիկան 2012–2019թթ.



Հավելված 3

2019թ. ԵՄ (28) 7 ԵԱՀԸ (4) անդամ պետություններում ապաստան հայցած ՀՀ քաղաքացիների թիվը



Աղբյուրը՝ Eurostat database, Asylum and first time asylum applicants by citizenship, age and sex Annual aggregated data

ԵՄ (28) 7 ԵԱՍԸ (4) անդամ պետություններում տարեվերջի դրությամբ ապաստանի ընթացիկ հայցերում ընդգրկված ՀՀ քաղաքացիների թվի դինամիկան 2010 – 2019թթ.



Աղբյուրը՝ Eurostat database, Asylum and first time asylum applicants by citizenship, age and sex Annual aggregated data

ԵՄ (28) 7 ԵԱՀԸ (4) անդամ պետություններում ապաստան հայցած ՀՀ քաղաքացիների թվի դինամիկան 2010 – 2019թթ.



Աղբյուրը՝ Eurostat database, Asylum and first time asylum applicants by citizenship, age and sex Annual aggregated data

Վերջաբան

Վիզաների ազատականացման գործընթացի դյուրացմանը զուգահեռ, ինչպես նաև համաձայնագրերի կիրարկման արդյունավետության համակարգային գնահատման համար և այդ ոլորտում ՀՀ և ԵՄ համագործակցությունը խորացնելու համար անհրաժեշտ է շարունակել իրականացնել մոնիտորինգ վիզաների տրման գործընթացում՝ հաշվի առնելով վիզաների մերժումների, ԵՄ սահմանների վրա մուտքի արգելանք ստացած քաղաքացիների, ԵՄ տարածքում անօրինական գտնվող ձերբակալված ՀՀ քաղաքացիների քանակը, ԵՄ-ում ապաստան խնդրած ՀՀ քաղաքացիների, ինչպես նաև ՀՀ վերադարձի որոշումների քանակի և վերադարձած անձանց քանակի համեմատական վերլուծությունը: Մոնիտորինգը հնարավորություն է տալիս ունենալ հնարավորինս ամբողջական տեղեկություններ մեկ վերլուծության մեջ:

Հույս ենք հայտնում, որ սույն ուսումնասիրության շրջանակներում արված վերլուծություններն ու եզրակացությունները, տեղ գտած առաջարկությունները օգտակար կլինեն ԵՄ-ՀՀ հարաբերությունների զարգացման մեջ, ինչպես նաև հիմք կծառայեն ԵՄ-ՀՀ միջև վիզա երկխոսության մեկնարկի ու հետագայում առանց վիզայի մուտքի ռեժիմ ստանալու հարցում և, որն ավելի կարևոր է, հիմք կծառայեն մի շարք ոլորտներում բարեփոխումների իրականացմանն ու ներդրմանը, այդ թվում միգրացիայի, ռեադմիսիայի, մարդու իրավունքների, անձնական տվյալների պահպանության և հարակից մի շարք այլ ոլորտներում համագործակցության խորացմանը:

Մենք բարձր ենք գնահատում սույն ծրագրի շրջանակներում ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Միգրացիոն ծառայության համագործակցելու պատրաստակամությունը, ինչպես նաև մեր միջոցառումներին Միգրացիոն ծառայության ներկայացուցիչների մասնակցությունը:

ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Համաձայնագիր Եվրոպական Միության և Հայաստանի Հանրապետության միջև վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին

վեցերորդ մոնիտորինգ

EDIT PRINT
43 D. Malyan str., Yerevan
Tel.: (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
Երևան, Դ. Մալյան 43
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am